

Glinpssende (Zingnissendy) F.
Zingnissende || Zingniss-
sende 5 Zingnissendy

lin

✓ 432

ԽՈՐԵՆԱՑՈՒՆ

ԽՈՐԵՆԱՑՈՎ, ՊԵՏԻ Է ՀԱՍԿԱՆԱԼ:



ԳՐԵՑ

Ս. Էջմիածնի Միաբան

ԲԱՐԳՈՒՂԻՄԷՍ ՎԱՐԴ. ԳԷՈՐԳԵԱՆ (ՃՈՒՂՈՐԵՆԱՆՑ)

ՎԱՂԱՐՇԱՊԱՏՅՈՒՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՅ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ


1899

Լեո
432

66-0-12

ԽՈՐԵՆԱՑՈՒՆ

ԽՈՐԵՆԱՑՈՎ ՊԷՏԻ Է ՀԱՍԿԱՆԱԼ:



ԽՈՐԵՆԱՑՈՒՆ

ԽՈՐԵՆԱՑՈՎ ՊԷՏՔ Է ՀԱՍԿԱՆԱԼ:

Գ Ր Ե Ց

Ս. Էջմիածնի Միաբան

ԲԱՐԴՈՒՂԻՄԷՈՍ ՎԱՐԴ. ԳԷՈՐԳԵԱՆ (ՃՈՒՂՈՒՐԵԱՆՑ)

ՎԱՂԱՐՇԱՊԱՏՅԻ:

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՄԿՐՏՁԻ Ա.



ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԱՋՆԱԴՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

1899



ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
 1899 թ. 1 հուլիսի 5

Дозволено Цензурою, 5 Июля 1899 г. г. Тифлисъ.

Յ Ա Ն Կ

	Երես
Յառաջաբան	Թ
Ա. Խորենացու մեկենասը	1
Բ. «Յանկագոյն» թէ «յանկագոյն»	6
Գ. Սխալ կէտադրութիւն	7
Դ. «զայք առ քէ, և զզայ և զթոյ առ փիւր, և զկենն առ եչ, և զչայ առ սէ»	8
Ե. Սխալ կէտադրութիւն	13
Զ. «Հաւացն ազգի մարդկան».—«Հաւ առնելով».—«Եւ եթուստ շարժու- մըն».—«զհամ պատերազմին».— «զԲիւռոս ասեմ».—«անմիաբանե- ցան»	15
Է. Խորենացին գրել է չորրորդ գիրք	16
Ը. «աստ ուրեմն»	27
Թ. «առաջինքն ի դիցն»	27
Ժ. «ի յունական կողմանն»	29
ԺԱ. «ի գուսանականէն (գուսան) այս գտանի ժողովեալ»	31

ՀՋ. 433 432-60

- ժԲ. «Ի հեղուածս արուեստին՝ որ զքա-
րամբք՝ հայեցեալ ուրուք, որպէս
ճարպոյ ինչ հեղման հայեցողացն
երևեցուցանէր զկարծիս» . . . 32
- ժԳ. «արեգականակս» . . . 34
- ժԴ. «Եւ զյուռութսն ի ծով եւ բան ի
նմանէ».—«Եւ բան յուռութիցն՝ որ
զնմանէ» . . . 36
- ժԵ. «Թուելեացն երգք» . . . 37
- ժԶ. «տենչայ, ասեն, Սաթենիկ . . . խա-
ւարծի ի բարձիցն Արգաւանայ» . . . 44
- ժԷ. «ոչ Արամազդ ոք, այլ» . . . 47
- ժԸ. «Երկնէր երկին եւ երկիր» . . . 50
- ժԹ. «Հասանէ ի միջոց աշխարհիս վերա-
գոյն քան զակունս մօրին մեծի
յափն Երասխայ, մօտ յԱրմաւիրն
որ ասի բլուր».—Մեծամօր, Գի-
նոյ գետ . . . 51
- Ի. «Իջանէ ի դաշտն մեծ. եւ անդ զա-
փամբ մօրին մեծի բանակի ի տեղ-
ւոջ, ուր գետն մեծ ի ծովակէն
հիւսիսոյ սկիզբն առեալ՝ իջանէ եւ
խառնի ի մօրն մեծ» . . . 56
- ԻԱ. «Եւ զգեցուցանողս իւր զձեռէս» . . . 60
- ԻԲ. «անյարմար թուէին նմա երգ բանիցն» . . . 61

- ԻԳ. «Եւ աստ ուրեմն յայտնել նշխարաց
երկոցունց եւ փոխել յառապարն» . . . 62
- ԻԴ. «Իսկ Արտաշէսի հասեալ Երուանդայ» . . . 67
- ԻԵ. «Լալքայ շատ եւ ոսկի բազում
տուեալ ի վարձանս . . . : Այս է
ոսկէօղ շիկափոկ պարանն» . . . 68
- ԻԶ. «Գեղմանց լեառն» . . . 71
- ԻԷ. «Եւ զՈւղտու ակունս» . . . 72
- ԻԸ. «անցեալ զկամրջաւն» . . . 73
- ԻԹ. «Հյառաջագունից ասացելոց մօտա-
ւորաց Վճենից» . . . 78
- Լ. «մարիսկեան բժիշկքն» . . . 81
- ԼԱ. «զիւրեաւ ցանցեալ» . . . 82
- ԼԲ. «Եկբատան երկրորդ» . . . 82
- ԼԳ. «Պաղադիոն քերածոյ» . . . 84
- ԼԴ. «Բայց սրբոյն Գրիգորի դարձեալ
ի նոյն լերինս» (Խորենացուց պատ-
մութիւններ զպատմած լինելուն
վճռական մի փաստ) . . . 86
- ԼԵ. «Հանապազասոտ արանց Աղուա-
նից» . . . 91
- ԼԶ. «մատեան ընդ ոտիւք ունելով, որ
նշանակէ» . . . 92
- ԼԷ. «զբռնամարտիկսն յաղթելով» . . . 92

- ԼԸ. «զոր Մուրոն կոչեն . . . : . . . ի
դաշտին որ կոչի Երևել» . . . 93
- ԼԹ. Մեսրոպեան և նախածեսրոպեան
տառեր:—Հեթանոս Հայերը ունե-
ցել են զբաղանուծիւն և սեպհա-
կան թէ «մուրացածոյ» տառեր . . . 97
- Խ. «աղանդոյդ բորբորիտոնաց» . . . 103
- ԽԱ. «քանզի անգէտք էին մերում ար-
ուեստի . . . ի ստոյգ յօդանալ ճե-
մարանին վերաբանութեան» . . . 103
- ԽԲ. «կարեկցութեամբ մեզ հաւասա-
րեալ» 105
- ԽԳ. Սխալ և աւելորդ կէտ . . . 105
- ԽԴ. «Մի քանի դժուար հասկանալի
բառերի նշանակութիւններ և սբր-
բազրութիւններ» 106

ՅԱՌԱՋԱԲԱՆ.

Խորենացու Հայոց Պատմութիւնը այս
վերջին տարիներում ենթարկուեց խիստ
քննադատութեան, և ինչ եմ ասում, կա-
տաղի յարձակման: Միաբերան և ամեն կող-
մից քրքիջ բարձրացրին Քամարար, էլ ինչ
կեղտ անուն մնաց՝ որ չտուին մեր երանելի
Պատմահօրը.—նա կեղծեւ է, նա գողացել
է, նա ս. Սահակի և ս. Մեսրոպի ժամա-
նակակից չէ, «678 թուից առաջ Խորենա-
ցու Հայոց պատմութիւն չկար» . . .

Պարոն Ս. Մալխասեանը աշխատեց
դիմադրել, պաշտպանել Սկային ոտնհարու-
թիւնից, բայց և յաղթահարուեց վերջապէս
և տեղի տուեց Կարիէրեան բանակին: Եւ
ինչպէս դիմադրէր, քանի որ Սեղբեստրոսի
վարքի՝ 678 թուին յունարէնից հայերէն
«Խորհանոթիւնից մի ամբողջ երես ընդօրէ-
նակութեամբ է Խորենացու Հայոց պատմութեան մէջ»
(Գ. Տ. Մկրտչեան. Արարատ 1897 թ. եր.
422—424): Յաղթանակը պահուած էր բազ-
մահմուտ պ. Նորայր Ն. Բիւզանդացու ջախ-

ջախիչ գրչին («Մշակ» 1898 թ. №, №. 192, 193, 195, 203, 206, 216, 217. շարունակելի է), Որին ազգովին պարտական ենք երախտապարտ ճանաչուել:

Այնքան եռանդուն քննադատութիւններն ընդհանուր հետաքրքրութիւն զարթեցրին, որից մղուած էս եւ բերում էմ ահա իմ լուսման Խորենացու Հայոց պատմութեան շուրջը կազմուած մատենագրութեան սեղանը: Ձեռքում ունեցել էմ այդ պատմութեան գրաբառը (հրատ. Տփ. Հ. Հրատարակչական ընկերութեան, 1881 թ. տպ. Յով. Մարտիրոսեանց) և դորա աշխարհաբառ թարգմանութիւնը (Խորէն եպիսկոպոս Ստեփանէի): Այս անյաջող թարգմանութիւնից, բայց և սիրուն և հարուստ առաջաբանից և ծանօթութիւններից տեղեկացել էմ ուրիշների սրբագրութիւնները, կարծիքները և բացատրութիւնները: Աշխատեցի Խորենացու Հ. պատմութեան մէջ մի քանի մութ կէտեր և կտորներ սրբագրել, թարգմանել և բացատրել՝ ինչպէս էս էմ հասկանում, որոնք է որ ուսումնասիրող և թարգմանողներ անուշադիր թողել անցել են, և է որ էս սխալ էմ գտնում նոցա սրբագրութիւն, թարգմանութիւն և բացատր-

րութիւնները: Միշտ պէտք չեմ համարել դորանք առաջ բերել կամ հեղինակների անունները տալ:

Նրեք անգամ դիմել էմ ս. Մայր Աթոռիս մատենադարանի ձեռագիրներին (11 օրինակ Խորենացի, և 1 օրինակ Սարգիս արքեպիսկոպոսինը). դուրս տալ արգելուած է: Բոլորն էլ ժէ. դարու գրչագիր, այն կողմը չեն անցնում. ինչո՞ւ:

Ներկայ շարադրութեանս խորագիրն է «Խորենացուն Խորենացով պէտք է հասկանալ». սորանից յարմար անուն չգտայ: Ամբողջը ԽԳ հատուած (գլուխ) է:

Միանգամ վերջացնելուց (28 յունվարի) յետոյ գրել էմ և զետեղել Ա. Է. ԺԱ. ԺԳ. ԻԲ. և ԼԸ. հատուածները:

Բարդ. վարդ. Գէորգեան (ձուղուրեանց)
վաղարշապատցի:

24 Մայիսի 1899 թ.
Է ս. Էջմիածին:

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Էրեւ	Դիւան	Նշան
46.	Աղբաղ	Աղբաղ
60.	Չեռէս յատուկ	Չեռէս—յատուկ

25. հասուածների վերայ: հասուածների վերայ:

28. մօտասերք գոլ մօտասերք գոլ

60. Ֆրանսիացի պրօֆ. Գերմանացի պրօֆ.

66. Խորենացուց յետոյ Լ: Խորենացուց յետոյ Լ.
կամ՝ անուոս նորա
պատմութեան ժամա-
նակաբանից դուրս:

որ կոչի Երեւել: որ կոչի Երեւել: — Ս.
Լուսաւորչի նշխարաց
գիրտի պատմութիւնը
(Բ. ՂԱ. Էր. 269):

86. Pallatium Palladium

ԽՈՐԵՆԱՅԻՆ ԽՈՐԵՆԱՅԻՆ ՊԵՏԵ Է ՀԱՍԿԱՆԱԼ.

Ա.

Խորենացի— Բիւնյան:

Խորենացին իւր Հայոց պատմութիւնը
գրել է «Մահակայ Բագրատունւոյ» խնդրա-
նօք, ինչպէս ցոյց է տալիս ա. գրքի Ա. գլխի
վերնագիրը: Որ այս Սահակ Բագրատունին
Վռամշապուհի եղբայր Խորով Գ.-ի սպա-
րապետ մեծ Սահակ ասպետ Բագրատունին
չէ՝ տարակոյս չկայ, որովհետեւ նա Վռամշա-
պուհի թագաւորելուց և Հայոց գրիւն
տից շատ առաջ մեռել էր.

«Ի մեռանել քաջ սպարապետին Հայոց Սահակայ
ասպետի՝ ի տեղի նորա զնա (զՀամազասպ Մամի-
կոնեան) աղաչէր (Սահակ Պարթևը) կարգել Խոս-
րովայ աղբայի, և զկնի կապանաց (Խորովայ),
եղբօր նորա Վռամշապուհի» (Գ. գիրք, ԾԱ. Էր.
363—364):

Վերջինիս թագաւորութեան (21 տարի) ժամանակն է՝ որ Համազասպ Մամիկոնեանը կարգւում է սպարապետ Հայոց զօրաց՝ Պարտից Արտաշիր թագաւորի հրամանաւ։

«Գորգիացեալդ զորս զՀամազասպ կացուցես ի վերայ զօրացդ սպարապետ՝ մեր հրամանաւ» (Եր. 266)։

Համազասպ Մամիկոնեանն էլ մեռած էր Մոսորով Գ. ի երկրորդ անգամ թագաւորելու տարին (414 թ.), Սահակ Պարթևից առաջ (գ. զիրք, ԺԵ. Եր. 374)։ Ուրլին, Վարդան Մամիկոնեան, Մշկանի (առաջին մարզպան) երեսից խոյս է տալիս և գնում ամրանում Մոկաց ամուր տեղերում (Թովմայ Արծ. ա. դպր., ԺԱ. Եր. 75)։ Համազասպայ մահից յետոյ Հայոց զօրաց սպարապետն էր Վահան Ամատունին (Մոր. գ. զիրք, ԿԵ. Եր. 408, և Թովմայ Արծ. Եր. 75)։ Այդ մեծ Սահակ Բաղրատունու մահուան ժամանակ (392—393 թ.) Մովսէս Մորենացին գեռ ևս ծընուած էլ չէր լինի. հետեաբար սխալ է Արծրունեաց տան պատմիչ (Ժ. դար) Թովմայ վարդապետի դրածը թէ՛

«Սահակս այս ա՛յն Սահակ է, որոյ նշանակաւ գրեաց մեծ վարդապետն Մովսէս իրեգերանդակեալ քերթոյն զգիրս պատմութեան Հայոց մեծաց, հրաշգան յօրինուածով, սկսեալ յԱդամայ մինչ ի կայսր Զենոն. որոյ ժամանակ կենաց տեալ ձգեալ ամս

է՛ լի պարարտ ծերութեամբ, որպէս գրեալ աւանդեցաւ մեզ այս ի չորրորդ դրուագի խոստաբանեալ պատմութեան Մովսէսի Մորենացւոյ, վերադարձութեան ի վերայ երկեցունց դրուագեալ հատուածին, զոր և երանելին Արիւն, ուսումնակից Մովսէսի և աշակերտ Մեսրոպայ՝ չիւրում ստուգարանեալ պատմութեան զայստօրիկ մեզ հաւատարմացուցանէ» (ա. դպր. ԺԱ. Եր. 75—76)։

Մորենացու մեկենաս Սահակ Բաղրատունու անձնաւորութեան խնդրում «Միաբանը» (Գ. տ. Մկրտչեան) ոչ միայն հակառակ չէ Թովմայ Արծրունուն, այլ և երկու ահագին սխալներ էլ ինքն է յաւելացնում. նա գրում է. «Թովման Սահակ Բաղրատունուն, հարկաւ սխալմամբ աւելի շուտ մեռած է համարում, քան թէ Վարդան Մամիկոնեանին» (Մորենացու պատմ. ուսումնասիրութիւն, Եր. 29)։ Իսկ 28 երեսում «լուսի սէս պարզ» միամտութեամբ յեղաշրջում է պատմութիւնը՝ այդ մեծ Սահակ Բաղրատունուն Մոր. Հայոց պատմութեան գ. դրքի 65 (ԿԵ) գլխում զանեղ հաւատացնելով, մինչ այդ գլխում միայն եւ միայն ս. Սահակ Պարթևն է Թովմայի և «Միաբանի» այն Սահակ Բաղրատունին շատ վաղուց մեռած էր, այո՛, Վարդանի ոչ թէ մեռնելուց, այլ թերևս ծնունդուց էլ «աւելի

շուտ»։ Իսկ ուրիշ Սահակ Բաղրատունի էլ չկար ասպարիզում։

Խորենացու մեկենաս Սահակ Բաղրատունի ուրիշ ոչնչով յայտնի չէ պատմութեան։ Չամչեանը, այն էլ փակագծի մէջ, մատնացոյց է լինում մի Սահակ Բաղրատունու վերայ՝ որին Հայերը, Ատրվշնասպ Մարզպանի մեկնելուց յետոյ մարզպան անուանեցին։

«(այն՝ յորոյ ի խնդրոյ արար երանելին Մովսէս Խորենացի զպատմութիւն իւր) և կարգեցին սպարապետ զնա ինքն զՎահան Մամիկոնեան» (բ. հատ. եր. 164)։

Այս Սահակը մարզպան անուանուեց 481 թ. և սպանուեց 482 թ.։ Թերևս այս Սահակը եղած լինի։ Բայց Խորենացու մեկենաս միթէ՞ չէր կարող լինել ոմն իշխան Սահակ Բաղրատունի, որ ոչ սպարապետ և ոչ մարզպան եղած լինէր...

Մի կարևոր հանգամանք շատ պարզ է՝ որ Խորենացին ծեր էր՝ երբ գրում էր Հայոց պատմութիւնը։ Բայց մարդիկ 70 տարեկան լինելուց առաջ իրենց ծեր չեն կոչում։ Ուրեմն նա այդ գրած պիտի լինի անշուշտ Վարդանանց պատերազմից (451 թ.) և քաղքեղոնական ժողովներից յետոյ, անհաւատալի չէ՞ որ հասցրած լինի մինչև Զենոն (491 թ.)։

Կորիւնը Ծի (120) տարի ոչ Սահակ Պարթևի համար է ասել և ոչ Մեսրոպի. առաջինի մահուան ժամանակի համար միայն գրած է։

«Եւեալ աւուրբք երկայն ժամանակօք... ի կատարել ամսեանն նաւասարդի, որպէս և զօր ծննդեան Երանելոյն յիշէին»։ Իսկ երկրորդի տարիքի մասին այսքան միայն. «համար հաւատոյ Երանելոյն ամբ քառասուն և հինգ, և ի դըպրութենէ Հայոց մինչև ցվախճան սրբոյն՝ ամբ երեսուն և հինգ» (80 տարի)։ ուրիշ ոչինչ։

Թովմայի հատուածում ասուած 120 տարին մի թիւրիմացութիւն պիտի լինի, կամ յետոյ՝ որ հաւանական է՝ արտագրողներից յաւելացուած։ Թովմայի խօսքը («Սահակս այս») սխալմամբ ս. Սահակ Պարթևի մասին կարծուելով, որովհետև նախընթաց երեսում Թովման Սահակ Պարթևի համար ասել էր. «Կեցեալ ամս թիւ փոխի յաշխարհէս ի կարգս հրեշտակաց»։ Թովման անշուշտ այս առած պիտի լինի Խորենացու Հայոց պատմութեան չորրորդ գրքից, — միակ աղբիւրը, որի (չորրորդ գրքի) մասին կըգրեմ գործիս Է. հատուածում։

Բ.

Յանկաթոյն ինչ յանկաթոյն:

«Թէ ընդէր, վասն զի ի քաղղէացւոց և յասորեաստանեաց մասենից ցանկագոյն են մեր իբրք, ի յունականէն կամեցաք մեր ցուցանել» (ա. զիւրք, Բ. Էբ. 3):

«Յանկագոյն» բառը յօրենացին գործ է ածել ցանկ (միշտ, յաճախ, առաւել) բառի նշանակութեամբ. հէնց այդ զլսի առաջին հինգ տողերը բաւական են այսպէս հասկանալու և համոզուելու համար.

«Եւ ընդ այս մի ոք զարմացի, եթէ բազում ազգաց լեալ մասենազիրք... մանաւանդ Պարսից եւ քաղղէացւոց, յորս առաւել ազգիս մեռոյ գտանին բազում ինչ իրաց յիշատակի, մեր զՅունացն միայն յիշեցաք պատմազիրս, և սնդուստ...»:

Այսպէս և ԻԱ. զլսի վերջում կարդում ենք.

«Ասլա եթէ տսիցեն, ուստի մեզ և գնախնեացն մերոց բազմաց այսպէս գտանել զանուանս և զգործս, ասեմ. ի հնոցն դիւանաց քաղղէացւոց, եւ ասորեստանեաց եւ Պարսից, վասն մեզից անուանց եւ գործոց նոցա ի քաղղէա արեւմտի, իբր գործակալաց եւ վերակացուաց աշխարհիս ի նոցանէ կացելոց, եւ մեծաց կողմնակալաց» (ա. զիւրք, Էբ. 69):

Ուրեմն «ցանկագոյն» բառը «յանկագոյն»

կարգալ (ըստ Նորայր Ն. Բիւզանդացու և մի-երկու ձեռագիրների) նշանակում է թարգմանել, կամ լաւ ևս է ասել, առաւել աղաւաղել յօրենացու բնագիրը քան վերականգնել:

Գ.

Անալ ինչ պարտութիւն:

«Քանզի ոչ թագաւորքն Յունաց՝ միայն որպէս աշխարհակալութեամբ, այլ և որ ինչ իմաստութեան են ջանք՝ փոյթ յանձին կալան աւանդել Յունաց... զամենայն ազգաց զմասեանս և զվէսս ի յոյն լեզու փոխարկել» (ա. զիւրք, Բ. Էբ. 4):

Ամեն օտար և մերային հրատարակիչներ, թարգմանողներ և ուսումնասիրողները չեն նկատել, թերեւ և չեն իմացել՝ որ «Քանզի ոչ թագաւորքն Յունաց՝ միայն» — ի զուգադիր շաղկապը յաջորդ տողի միջի եղած «այլ եւ» (որ ինչ) — ը չէ՛, այլ՝ ճիշդ 20 տողից յետոյ պէտք էր տեսնել.

«Այլ եւ բազում արքանուանիք և իմաստութեան պարագետք ի Յունաց աշխարհէն հոգացան՝ ոչ միայն զգիր դիւանաց այլոց ազգաց թագաւորաց և զմեհենից լեզու ի յոյն բան... այլ և զմեծամեծս և զգարմանալոյ արժանաւորս յարուեստից, և ուրեք

ուրեք գտեալ աշխատութեամբ, հաւաքեալ փոխեցին ի յոյն լեզու. որպէս զայլ առ քէ . . . »:

Սակայն այսպէս ուղիղ հասկացուելու համար պէտք է և՛ սխալ դրուած բռնութիւններ վերցնել «Յունաց» բառի վերայից և դնել հետեւեալ «միայն» բառի վերայ, որ կրկինի «Քանգի ոչ թագաւորքն Յունաց միայն» որպէս . . . : Այլ եւ բազում արք . . . »: Մնացեալ բոլորը, զրեթէ մի երես, միջանկեալ խօսք են:

Դ.

«որպէս զայլ առ քէ, եւ զգայ եւ զքոյ առ փիւր, եւ զկենն՝ առ եչ, եւ զգայ առ սէ» (ա. գիրք, Բ. եր. 5.):

Սորենացու պատմութեան այս երկու տող դրուածը թարգմանողների, ուսումնասիրողների, և առհասարակ ընթերցողների համար մի փորձաքար է, որ քիչ չէ տանջել

I. Իմ տեսած ձեռագիրներից իննը, այլ եւ Վեներտի եւ Տփլիսի տպագիրներն ունին այսպէս արձակ, եւ բոլորն էլ «զկենն» դիմորոշ յօդով (Սարգիս արքեպիսկոպոսի ունեցած գրչագրում «առ փիւրն» նոյնպէս դիմորոշ յօդով է), որ ի նկատի պէտք է ունենալ. իսկ միւսները՝ «որպէս զա. առ ք.» եւլն, իւրաքանչիւրի սկզբնատառերն ունին, Վերջին տեսակի ընթերցուածն է ուղիղը, իմ կարծիքով. որ ահա պիտի բացատրեմ:

ուղիղների, և որ դարձեալ նոյն հանելուկն է ցայսօր, գուցէ և այսուհետեւ:

Թարգմանի զիտնական Նորայր Ն. Բիւզանդացին իւր յիշեալ յօդուածում ասաց. «որպէս զԱյլ առ քէ. չեմ ընդունիր զմնացեալն»: Կամենում է ասել թէ՛ նշանակում է սկզբից ցվերջ (Ա—Բ) և թէ միւսները նորամուտ յաւելուած են: Ուրեմն դուրս ձգուելիք . . .

Գերապատիւ Հայր Ալիշան և ուրիշներ իւրացրել կամ հաւանել են այն բացատրութիւնը՝ որ գտնուում է և՛ մեր մատենադարանի մի զրչագրի (№ 1665) լուսանցում յաւելցրած, և որ առաջարկում են.

«որպէս զԱստեղաբաշխութիւն առ Քաղէացիս, Թուաբանութիւն առ Փիւնիկեցիս, Երկրաչափութիւն առ Նդիպտացիս, և Երաժշտականութիւն առ Թրակացիս» (Արարատ 1894 թ. յունիս):

Աւելորդ չէ նկատել՝ որ այդ կերպ բացատրութեամբ «զԱստեղաբաշխութիւն առ Զաղէացիս» ևայլն շինում են խնդիր «զըտնալ» բային, մինչ, կարծում եմ որ, դժբախդիր են «փոխեցին»¹ բային (կարդա՛ բնա-

I. «եւ Յոյնը ինքեանը ի քաղէացեոցն փոխեցին (զմատեանս եւ զվէպս) յիւրեանց լեզուն» (ա. գիրք Բ. եր. 4 եւ Ե. եր. 19):

գիրը զրքում կամ նախընթաց Գ. հաստուածում): Բաւական է թէ այս կարծիքս միայն ուղիղ լինի, Հ. Ալիշանի վերոյիշեալ բացատրութեան հիմքը ինքն ըստ ինքեան կը տապալուէր...

Ընդունել $ա =$ աստեղաբաշխութիւն, $ք =$ քաղդէացի, $թ =$ թուարանութիւն, $փ =$ փիւնիկեցի, $ե =$ եգիպտացի՝ ղեռ ասեւք կարելի էր մի կերպ թոյլ տալ, բայց $կ =$ երկրաչափութիւն և $շ =$ երաժշտականութիւն են թաղրելու ինչ հիմք կայ, նորա համար որ այդ բառերի միջին վանկերում $կ$ և $շ$ տառեր կան. — այդ խիստ անբանաւոր և կամայական կը լինէր:

Իսկ զ դուրս են ձգում, և $ս$ շինում են թ, ասելով՝ «սէ ընթերցուածը սխալ է և առաջ է եկել սէի եւ թոյի նմանութիւնից» (Միաբան. նոյն Արարատ): Պրծանք գնաց:

Ինչո՞ւ այդ աստիճան բռնադրօսել խեղճ Խորենացու միտքը մի թրակացիս անմիաբառ (նոյնպէս և միւսները) թխելու համար: Ես կարծում եմ Խորենացու բնագրի այդ տեղը վերականգնել հետեւեալ կերպով.

«հաւաքեալ փոխեցին ի յոյն լեզու. որպէս զԱ.

1. Եւ այլ մեծանուն գիտնականներ զանազան ենթադրութիւններ եւ կարծիքներ յայտնած են. տես Խորէն եպիսկոպոսի ծանօթութեանց մէջ:

առ Ք., և զԳ. և զԹ. առ Փ., և զԿ. և առ Ն., և զԸ. առ Ս. »:

Կարծեւորով թէ մի՛ գուցէ դարձեալ անհասկանալի մնաց, ուստի պարզեմ միտքս: Գրաւոր երկերն ընդհանրապէս կոչուում էին հեղինակների անունով. օրինակ. — Ազաթանգեղոս ասելով հասկանում ենք և՛ Ազաթանգեղոս անձնաւորութիւնը և՛ Ազաթանգեղոսի գրած գիրքը, այսպէս և ուրիշները: Ես ընդունում եմ որ դոքա անունների սկզբնատառեր են մատենագիրների և նոցա երկերի առհասարակ, և որ հասկանում եմ.

« փոխեցին ի յոյն լեզու. որպէս զԱ. = (օրինակի համար) զԱռիտոս, կամ զԱրիւդէն, զԱղէքսանդր բազմալէս, զԱրիստոն¹, զԱպպիանոս, զԱփրիկիանոս, հայն առ Ք. = (օրինակի համար) Քսենոֆոն, ևին, և զԳ. = զԳրադաշտ, կամ Զենդ — Ավէստա, ևին, և զԹ. (Թ սկզբնատառով անուն մատենագիր Խորենացուն յայտնի էր) առ Փ. = Փղեդոնիոս, կամ Փղորոս, Փիլէմոն, Փիլոն, Փլաբիանոս, ևին, և զԿ. = զԿիփաղիոն, կամ զԿամադոն, հայն առ Ն. = Ներոդոս, կամ (Հ)Նկատէ, Նազրոս, Նաորոպիոս, Նալփանոս, Նեսիբիոս, ևին, և զԸ. = զՇահ-

1. Արիւդէն այլ եւ Արիստոն քաղդէացիք են՝ ըստ Թովմայ Արծրունու (էջ ք. եւ ա. դպր. Ա. եր. 7). մինչ Արիւդէնը Յոյն է համարուած, իսկ Արիստոնը՝ հրէաստանցի (տես Խոր. աշխ. Թարգմ. ծան. 17 եւ 426):

նամէ 1, եւայլն առ Ս. = Սիրիզիա, կամ Սարաբոն,
և այլն 2:

Ասացի օրինակի համար, որովհետեւ կա-
րող է որ յիշածս անուններից և ոչ մին
չարդարացնէ իմ ներկայ բացատրութիւնը,
սակայն այդ կէտում կը մնայ խոր համոզմուն-
քով և դրապէս առարկել՝ թէ Խորենացու
այդ կերպով յիշած մատենադիրների և՛ ա-
նունները և՛ երկերը է՛ որ կորած պիտի
լինին, է՛ որ ուրիշների անուններով մեզ հա-
սած⁵, և է՛ որ իմ յիշատակած անունների
մէջ չմտան: Ես չունիմ այն լեզուագիտական—
պատմական համոզութիւնը՝ թէ այս վերջին
ենթադրութիւններս ստուգելու հետամուտ
լինէի. կարողները թերեւ կը փորձեն:

Ձերկարացնելու համար փակեմ այս

1. Ֆիրդուսիի երկի «Շահնամէ» անունը հին է՝
որքան նորա աղբիւրները կամ ժողովրդական երգերը:

2. Ընթերցողներն երեւի թէ ոչ սակաւ կը ծիծա-
ղեն՝ որ ես այժմ ձախ ձեռքս ընկած մատենադիրների
անուններ շարում եմ առանց հաշուի առնելու . . .

3. «Քառաք զայսոսիկ արդարեւ Յունաց դպրու-
թեամբ. դի թէպէտ եւ Յոյք ինքեանք ի քաղցեացոցն փո-
խեցին յիւրեանց լեզուն, եւ թէպէտ քաղցեացի որ ինքնակամ
յօժարութեամբ եւ կամ թէ ի հրամանէ թագաւորաց
հարկեալ զայս իրագործել, որպէս Արիոս ոմն եւ այլք բա-
զումք, սակայն մեք Յունաց համարիմք, որպէս ի նոցանէ ու-
սեալք» (ա. գիրք, Ե. եր. 19): Տես եւ նախընթաց երե-
սում 1 ծանօթութիւնը:

հատուածը Խորենացու խօսքի շարունակու-
թիւնը դնելով:

«Եւ ժողովեալ զայսոսիկ արանց, զորոց եւ մեք
զանուանս հաւաստի գիտեմք, նուիրեցին ի փառս
հեղինացւոց աշխարհին»:

Կարելի է կարծել որ այս տեղ Խորենա-
ցու խօսքը յատկապէս հեղինացոյ ժողո-
ված պատմութիւնների մասին է, որից ինքն
օգտուելով—«Յունաց համարիմք, որպէս ի նո-
ցանէ ուսեալք»—գրում է իւր Հ. պատմու-
թիւնը: Միւս կողմից՝ այս ևս պէտք է ի
նկատի առնուլ՝ որ Խորենացին իւր այս (և
ոչ մի այլ) երկով մեզ չի աւանդում ոչ
աստեղաբաշխութիւն, ոչ թուարանութիւն, ոչ
երկրաչափութիւն և ոչ երաժշտականու-
թիւն . . .

Իմ այս բացատրութեանը համոզուելու
համար թող խնդրում եմ, Խորենացու
պատմութեան այդ գլուխը լաւ ուշադրու-
թեամբ և մի քանի անգամ կարդան:

Ե.

Սկսւմ է Կարենի:

Խորենացին վիշտ յայանելով մեր հնա-
գոյն նախնեաց «անիմաստասէր բարուց» մա-

սին, որ «բազում գործք արութեան գտանին
գործեալ և ի մեղում աշխարհիս, և արժանի գրոց
վիշառակի, գորոց և ոչ մի ոք ի նոցանէ պէտք
յանձին կարաւ մատենագրել. . .»¹ ապա ինքնին
և՛ հարցնում և պատասխանում է. «Այլ ա-
սիցէ ոք արդեօք. վասն ոչ լինելոյ դիւր և դարձու-
թիւն ի ժամանակին, կամ վասն պէսպէս պատե-
րագմացն. . . : Այլ ոչ արդարեւ այսոքիկ կարծեցեալ
լինի. քանզի գտանին և միջոցք լեալ պատերազ-
մացն և զիւր Պաբսից և Յունաց (և Ասորաց), որովք
այժմ գիւղից և դաւառաց ևս և խրաքանչիւր
տանց առանձնականութեանց և հանուրց հակառա-
կութեանց և դաշանց առ մեզ գտանին անբաւ
զրուցաց մատենաք, մանաւանդ ի սեպհական ազա-
տութեան պայազատութիւն» (ա. գիրք, Գ. եր. 7) :

Իւր իսկ յորենացու այս պատասխանից
յետոյ անհնարին սխալ կլինէր այլ ևս թող-
նել ձեռագիրներ ընդ (№ № 615, 1661, 1668)
և տպագիրների (բոլորը) միջակէտը «ար-
դեօք» բառից յետոյ. պէտք է միջակեալ գնել
անպատճառ դորանից առաջ և գրել այսպէս.
«Այլ ասիցէ ոք. արդեօք վասն ոչ լինելոյ. . . »¹ :

Եւ մաքի ահագին տարբերութիւն և
անհամաձայնութիւն կայ երկու ընթերց-
ուածներէ մէջ :

1. Իսկ միւս ձեռագիրները կէտ չունին ոչ մէկ եւ
ոչ միւս տեղում :

9.

«անմիաբանեցան. . . ալ (և) վասն ոչ սկիզբն
զառ ի մէջն հաւացն կարգելոյ ազգի մարդկան»
(ա. գիրք, Գ. եր. 9—10) :

Գերապատիւ Սոր. Կաթողիկոս Ստեփա-
նէն հիմնուելով «Միաբանի» սրբազրութեան
վերայ՝ «հաւ առնելով» — ը թարգմանել է
«տեղեկութիւն առնելով», իսկ «հաւացն» բաց
է թողնում՝ անմարացած, և խոստովանում
է որ եթէ «Միաբանի» «համըսացն» ըն-
դունէր և թարգմանէր՝ «պարբերութիւնը
անիմաստ կը դառնար» :

Սխալուում են և անդիտանում միասին
որովհետեւ «հաւ» նշանակում է մեծ ջայռ,
պատ, նախնի, պատճառ, սկիզբն : Ուրեմն
«անմիաբանեցան. . . ալ (և) վասն ոչ սկիզբն զառ
ի մէջն հաւացն կարգելոյ ազգի մարդկան», նշանակ-
կում է «միաբան չեն նա և մեր կարգելու
համար մարդկային ազգի նախնիքների սկիզբը
(առաջինը — Ադամ)» :

Իսկ «այժմ ուրախացաց հաւ առնելով առա-
ջիկայիցս իմոց բանից. . . ի Բիւռոսեան Սիրիդ-
ղիայ» (ա. գիրք 9. եր. 21), նշանակում է
«այժմ պիտի ուրախանամ առաջիկայ իմ
խօսքերի սկիզբը կազմելով (իմ խօսքն սկզբ-
նաւորելով) Բիւռոսեան Սիրիդղիայիցը» :

Թող այդ մարդիկ գննէ խտրեն առնել
և առնուլ բայերի նշանակութիւնները ։

Է.

Խոյնացին Բրէլ է արտաբերութիւնը ։

« Արդ օրէն է մեզ աստանօր զխարծիս նոցա
(Բիւռոս) Աղէքսանդր բաղմալէպ և Արիւ-
դենոս. Ադամի, Նոյի, և այլ նահապետների
անունների և ժամանակների և այլ բաների
մասին) յայտնել, թէ զինչ իւրաքանչիւր ոք ի նո-
ցանէ խորհնցան այսպէս դայսոսիկ գրել. այլ վասն

1. Այսօր միայն (16 փետրվ.) ստացայ տպարանից
« Միաբանի » (Գ. Տ. Մկրտչեան) « խորհնացու պատմութեան
ուսումնասիրութիւն » գրքոյկը. ուստի իմ ասելիքը յա-
ւելացնում եմ ծանօթութեամբ, ինչ հարկաւոր էր « հաշ-
հաշացն » բառի սրբագրութիւնը տեսնել, որին կրաւորա-
բար հետեւած էի համարում խորհնացու գեր. թարգ-
մանողին. 16—18 երեսներում դուայ իմ վնարածը,
բայց 16 երեսում դառնում է « եւ երոշտ շարժումն »
(Ա. 20) ընթերցուածի սխալ սրբագրութիւնն եւս. ուստի
նախ սորա մասին. —

Ա) « Գեղեցիկ կերպով » (Միաբանի ասելով) սրբ-
ագրում են « եւ եթուստ » — ը վենետիկ 1831 թուի
հրատարակութեան մէջ եւ կարդում են « եւ եր ուտոց ».
ապա, ըստ գեր. Շ. Ալեքանի « վարկածի » շինում են
« եւ բաշ ուտոց ». եւ այսպէս զհետ դնալով միասին
սխալում են սրբագրող եւ հաւանողները եւ փչացնում
գոնէ մինչեւ մեզ հասած բնագիրը, եւ այստեղ առաջ
կը բերեմ տպագրից այդ հատուածը իմ հասկացած ձեւով.

երկարութեան առաջիկայ դործեյս՝ այլում տեղով
եւ ժամանակի գայտոսիկ քողեալ, հատուցողը աս-
տանօր գրանա » (ա գիրք, Գ. եր. 10—11) : — « Էր
աղագաւ սա (նշովս) առաջին ասի կոչել զԱստ-

առանց սրբագրութեան գրելիք. « Սոս անուանիւր. քան-
զի ճօնեալ էր ըստ պաշտամանց ի սօսիսն Արամանեկայ՝
որ յԱրմաւիր. դորոց զսաղարթուցն սօսաւիւն, ըստ հան-
գարտ եւ կամ սաստիկ շնչելոյ օգոյն եւ եր ուտոց — մ' ծու,
par ծու — (կամ (յ) ետոշտ) շարժումն, սովորեցան ի հմայս
աշխարհիս Հայկազանց » : Այսպէս խորհնացին աղօտ լոյս է
սփռել եւ հմայութեան եղանակի վերայ, մինչ « ուտոց » —
բաշ ուտոց շարժումն » գրելու պէտք էլ չէր ունենայ
խորհնացին՝ « զսաղարթուցն սօսաւիւն » գրելուց յետոյ,
Տեղի սղութեան պատճառաւ, մանաւանդ որ շատ երկա-
րեց, կարճ ասեմ՝ որ այդ երեսում « զհամ պատերազմին
Արշակայ » (բ. Գ.) — « զհամբաշ պատերազմին Արշակայ »
սրբագրելով եւ թարգմանելով նոյնպէս սխալում են չա-
րագար . . .

Բ) « հաւ, հաւացն » բառի սրբագրութիւնը անբա-
նաւոր է եւ անհեղեղ (absurde) : Զհասկանալով խորհնա-
ցու լեզուն, չկարողանալով բարձրանալ՝ Նորան են բըռ-
նաղբօսելով իջեցնում իրենց կանգնած մակերեւոյթի հա-
ւասարութեան. — « անմիաբանեցան » — ը խելքի զօր տալով
դարձնում են « միաբանեցան », « զԲիւռոս » — ը՝ « զԲիւ-
ռուեայ », « հաւացն » — « համբաշաց », « հաւ առնելով » — ը՝
« համբաշ — տեղեկութիւն առնելով », « ասեմ » — ը՝ հասկա-
նում են աւելոշ մտքով . . . ստիպուած եմ կրկնելու՝
որ խորհնացու գրածը հասարակ վերլուծել դժուարա-
նում են.

Խորհնացին գրել է. « Յաղագս զի ոչ սակս Ադա-
մայ եւ այլոց նահապետացն միաբանեցան այլք ի պատ-
մագրաց (վերնագիրն գլխի), Յաղագս արմատոյն հանուրց
մարդկութեան, կամ թէ հաճոյ ումեք թուեսցի ասել
ժայրիւն, պարտ էր մեզ սակաւ ինչ անցանել բանիւ, թէ
ընդէր հակառակ Հոգւոյն խորհել անմիաբանեցան այլքն

ուած, և այս՝ յուսով: Արդ զայլն վասն սորա ի տեսութեանց ի հրախրեալն մեր յուղարկեսցո՞ւք տեղի. իսկ որ ի ձեռն պատրաստն է՝ ասասցուք» (Եր. 11—12):

Ի պատմադրաց, զԲիւռոս ասեմ, զբաղմամբիսն եւ զԱբիւղեանայ, կամ զնոյն ինքն զնաւակաւուցէն եւ զայլոց նաւապետաց. ոչ միայն վասն անուանց եւ ժամանակաց, այլ (եւ) վասն ոչ սկիզբն զառ ի մէջն հաւացն կարգելոյ ազգի մարդկան:

Այս հատուածից «Միաբանը» չակերտներով առաջ է բերել միայն հետեւեալը իւր սրբազրած ընթերցողածով. որ ես նշանակեալք, հանդերձ իւր ծանօթութիւնովը (փակագծի մէջ), առաջ եմ բերում. «Հակառակ Հոգւոյն խորհել միաբանեցան (անմիաբանեցան) այլքն ի պատմադրաց, զԲիւռոսեայ (Այս «զԲիւռոսեայ» բառի փոխանակ տալովը Խորենացիներն ունին քերատ ընթերցուած, «զԲիւռոս ասեմ, զԲաղմամբիսն եւ զԱբիւղեանայ») ասեմ, զԲաղմամբիսն եւ զԱբիւղեանայ. կամ զնոյն ինքն զնաւակաւուցէն եւ զայլոց նաւապետացն. ոչ միայն վասն անուանց եւ ժամանակաց, այլ (եւ) վասն ոչ սկիզբն զառ ի մէջն հաւացն կարգելոյ ազգի մարդկան»: Ապա գրում է. «Մեր կարծիքն այս է. հաւացն պետք է կարգալ՝ համբաւացն եւ հաւ—համբաւ». եւ մի քանի տողերից յետոյ թարգմանում է. «միտքն էլ այս է, որ Բիւռոսի տուած համբաւները (տեղեկութիւնները) նաւակաւուցի (հոյի) եւ միւս նաւապետներ ժամանակն, այլ եւ մարդկային ազգի սկիզբն աւորութեան մասին, համաձայն չեն ս. գրքին»:

Սխալ են «Միաբանի» սրբազրածները, սխալ է եւ թարգմանութիւնը, մի եւ նոյն ժամանակ անհամաձայն թէ բնագրին եւ թէ իւր սրբազրածներին: Թող շնորհ. «Միաբանը» եւ նորան համաձայնողները իմանան՝ որ «ոչ... միաբանեցան» —ը նոյն է «անմիաբանեցան», «հաւացն» նշանակում է նախնիքների, «հաւ»՝ սկիզբը, «ասեմ» —ը՝

Այս հատուածներից պարզ տեսնում ենք՝ որ Խորենացին խոստանում էր վերագառնալ այս նիւթերին: Ուրիշ առիթներով ևս և՛ խոստանում և՛ յիշեցնում է վերադառնալ զրեւել, սակայն «արսւոյ այս գրոց».

Իմա՛, հետեւաբար՝ ուշիւր անմահ Խորենացու «զԲիւռոս» —ը է, ոչ թէ «զԲիւռոսեայ», «Միաբանը» եթէ ըմբռնած լինէր գրողածի իմաստը, ընդհակառակն պատմական հոլովները (զբաղմամբիսն եւ զԱբիւղեանայ) հաւցական դարձրած պիտի լինէր...

Վերջապէս թարգմանեմ Խորենացու գրածը. — «Մեզ պէտք է փոքր ինչ կանգ առնել (սակաւ ինչ անցանել բանիւ) թէ ինչո՞ւ այլ (ս. գրքի աշակերտներից դուրս) պատմադիրները, իմա՛ — այսինքն («ասեմ») Բիւռոսը, Բաղմամբիսն եւ Աբիւղեանը խորհելու անմիաբան եղան, հակառակ Հոգւոյն, բոլոր մարդկութեան արմատի, կամ եթէ մէկին հաճելի կը թուի ասել՝ ծայրի համար, կամ նոյն իսկ նաւակաւուցի (հոյ) եւ այլ նաւապետների մասին. ոչ միայն անունների եւ ժամանակների համար (անմիաբանեցան), այլ եւ մարդկային ազգի (հաւացն) նախնիքների սկիզբը մեր կարգելու համար»:

I. «Սա (եւովը) ... Փոխեալ ասի ի միջոյ ամբարշտաց. զորոյ զպատճառն յետոյ հասուցացոք» (Եր. 13). — «Բաղում այլ ինչ զնմանէ (Չրուանի մասին) առասպելեաց (Չրադաշտ մող), զոր անտեղի է մեզ այժմ երկրորդել» (ա. գիրք, Զ. եր. 22). — «Եւ ընդէր սա (Եփեսոսոս) գտալ հոյ եւ կամ Պաոմիթէոս գողացեալ զառ ի յաստուածոցն հոյ եւ շնորհեալ մարդկան. որ է այլաբանութիւն, եւ ոչ բերե ասել կարգ բանիս» (Է. եր. 26). — «այլուս տեղոյ եւ ժամանակի զայսուսիկ (Սահակ Պարթեւի մասին) քողոքոք՝ արտաքոյ այս գրոց ոչ սկզբունն հրաշքեցաք առնել քերտորոքիսն» (գ. գիրք, ԿԷ. եր. 407):

և այս բառերը գրում է մեր ձեռքը արդէն հասած պատմութեան վերջին զրքի վերջին գլխում: Մի և նոյն ժամանակ քաջ գիտեմ որ նա իւր Հայոց պատմութեան (ա. ք. գ.) գրքերում և ոչ մի անգամ չէ վերադարձել այս նիւթերին: Այլ ևս անտարակուսելի է, հակառակ «Միաբանի» մտացածին «ապացոյց»-ի, որ Խորենացին, ինչպէս իւր Հ. պատմութեան սկզբում՝ այնպէս և վերջում մտադիր էր առանձին նոր գիրք գրելու, բայց որ այսօր չկայ մէջտեղում:

Ի հարկէ կառարկեն թէ՛ մտադրութիւնը մտադրութիւն էլ մնացել է:

Խորենացու չորրորդ զրքի լինելութեան մասին թերեւէմ կարծիք յայտնողներ շատերն են եղած. ես կարգացել եմ միայն Խոր. Հ. պատմութեան աշխ. թարգմանչի առաջաբանում (խզ—ծա) և ծանօթութիւն՝ 829, այլ և «Միաբանի» (Գ. տ. Մկրտչեան) «Խոր. պատմութեան ուսումնասիրութիւնը» (էր. 18—45): Այս վերջինը ճշնում է ցոյց տալ թէ Թովմ. Արծրունու «ի չորրորդ դրուագի» խօսքը «յերրորդ դրուագի» եղած է նախօրինակում, — իբր թէ գ փոխուած լինի դ. հիմնուելով (ինքը) Թովմայի «երկեցունց» բառի վերայ. իսկ «դրուագ» բառն էլ հաս-

կանում է զիրք¹: Եւ այս ըստ երևութին յաջող լուծումը յաղթանակեց մտքերի վերայ:

Սկզբից և փակագծում հարեանցի նշկատեմ՝ որ ի նախդիրն էլ բացարձակ բողոքում է այդ կամակոր կարծիքի դէմ թէ՛ գ փոխուած լինի դ. . .

Թով. Արծրունին գրել է. «որպէս զբեալ աւանդեցաւ մեզ այս ի չորրորդ դրուագի խոսաբանեալ պատմութեանն Մովսէսի Խորենացույ, վերադարձուրեան ի վերայ երկեցունց դրուագեալ հասուածին» (ա. դպրութիւն, ԺԱ. էր. 76):

Ամենակարեւոր բանն է, այո, նախ ճշգրէ՛լ թէ Թովման «դրուագ» ասելով զլուխ էր հասկանում թէ գիրք, հատոր, մասն:

Խորենացին «դրուագ» ասելով հասկանում էր զլուխ. «Այս դրուագ մեծ» (Բ. գիրք, է. էր. 108). իսկ Թովման ինքն էլ գիրքը, հատորը, մասը, կոչում է «դպրութիւն»²: Սորա պատ-

1. «Միաբանը» իւր յօդուածը ամփոփում է. «Այս տեղ վերջացնում ենք մեր այս յօդուածը, կարծելով ապացուցած լինել. ա. Խորենացու չորրորդ գիրքը գոյութիւն չունէր, Բ. ուստի եւ այդ չորրորդ գրքի մասին ոչինչ չգիտէր եւ Թովմա Արծրունին: Գ. Չորրորդ գրքի գոյութիւնը սկիզբն է առել գիմը դա կարդացուելուց, դըռնադրի վրիպակից կամ սխալ վերծանութիւնից: Դ. Արծրունու բոլոր յիշածները գտնուում են Խորենացու մէջ, բացի Զենոն կայսրից եւ հարկւր քսան թուից. . . . (էր 31):

2. «Ի կանոնի անդ գտցես զՆինոս եւ զՇամիրամ եւ զԱբրահամ եւ ըզ վեշտասաներորդ հարստութիւն

մութիւնը բաղկացած է չորս դպրութիւնից
և է 59 գլուխ (ԺԱ. + Է. + ԻԹ. + ԺԲ. = ԺԹ):
Հետևաբար Թովմայի ասած «չորրորդ դրուագ»
խօսքը նշանակում է չորրորդ գլուխ. ուրիշն
պէտք է առանց մի րոպէ տատանուելու կանգ
առնենք Խորենացու Հ. պատմութեան (ա.
գրքի) չորրորդ գլխի վերայ: Ընդ սմին պէտք
է ի նկատի ունենալ իմ բերած ծանօթու-
թիւնը՝ որ նոյն Թովման Խորենացու չորրորդ
դպրութեան (գիրք) մասին շեշտեց առանձնա-
պէս և որոշակի: Ուրեմն և «ի չորրորդ
դրուագի» խօսքը «միակ աղբիւրը» — վկայու-
թիւնը չէ, ինչպէս միաբերան հաւատացնում
էին ցայսօր, Խորենացու պատմութեան չոր-
րորդ գրքի գոյութեան:

Եթէ բանը մնար դարձեալ խեղճ «ի չոր-
րորդ դրուագի» խօսքին, ցնորք կը լինէր Խո-
րենացու չորրորդ գրքի մասին մտածելը.
ցնորք, ոչ այն սխալ բայց մի և նոյն ժամա-
նակ «վերջնական» կարծուած փքուած վճռով
թէ՝ «չորրորդ դրուագ» խօսքը նախօրինակում
երրորդ դրուագ է եղած, և թէ՝ «դրուագ»
նշանակում է գիրք, հատոր, այլ, հակառակ

Եգիպտացւոց, եւ ի չորրորդ դպրութեան Յուլիանու Աղե-
կաւնացւոյ, որպէս եւ ի չորրորդ դպրութեան Մովսէսի (Խո-
րենացի)» (ա. դպր. Ա. եր. 9):

«Միաբանի» և «այս խնդրով զբաղուող բոլոր
բանասէրներ»-ի, ընդ հակառակն ցնորք՝ որով-
հետեւ հէնց Թովման էլ, նման Խորենացուն,
«դրուագ» հասկանում է գլուխ, իսկ «դպրու-
թիւն» գիրք, հատոր, մասն. և այս անվի-
ճելի կերպով:

Այսքանն էլ բաւական է՝ որ «Միաբա-
նը» յետ վերջնէր չորրորդ գրքի դէմ իւր
ամբողջ 28 երես գրածը: Բայց ես դեռ
չվերջացրի: —

Աստուածաշունչ գրքի մէջ կայ երկու
գիրք՝ ա. ք. «Մնացորդաց» կամ «Մնացորդք»
անունով (Paralipomènes). այդ գրքերը վերա-
դարձութեամբ պատմում են (Ադամից մինչև
Զորարարել) այն մնացած — բաց թողնուած
բաները՝ որոնք պակասում են նախընթաց 12
գրքերում, այս իսկ պատճառով էլ կոչւում
են «Մնացորդք» կամ «Մնացորդաց գիրք»:
Թովմայ Արծրունու պատմութեան մէջ առ-
հասարակ շատ քաններ կան՝ որ մեր ունեցած
Խորենացու Հ. պատմութեան մէջ պակասում
են, սակայն այժմ խօսքս նորա ա. դպր. Զ.
գլխի մասին է: Այդ տեղ (եր. 44) կարդացի.

«Իսկ առ մեզ հասին զրոյցքս այս քս մնացոր-
դաց պատմագրացն առաջնոց, ի Մամբրէէ վերժա-
նողէ և ի նորուն եղբօրէ Մովսէս (Խորենացի) կո-
չեցելոյ, և միւսումն Թէոդորոս քերթող»:

Այս հատուածի մէջ եթէ «մնացորդաց պատմագրացն առաջնոց» բառերը չհամարենք վերոյիշեալ անունների քացայայտեալը, սակայն զրոյցները զոնէ հօ՛ նոցանից են թուլմային հասած, քայց որ չենք կարող նարել խորենացու ներկայ պատմութեան մէջ (նոյնպէս և միւսների): Այդ տեղ հետաքրքիր նորութիւն է մանաւանդ հեռեկայը. «եւ տանել (կղեւորատր) գոյիւանն մաղաղաթեայ յաւարէն գրով հանդերձ պատարադօք՝ Տիգրանայ թագաւորին Հայոց» 1:

Բայց ես դարձեալ չվերջացրի, որովհետեւ թովմայի յայտնի հատուածը բաւարար չուծումն չստացաւ:—

«Գրեալ աւանդեցաւ մեզ այս ի չորրորդ դուագի խոստարանեալ պատմութեանն Մովսէսի խորենացոյ, վերադարձութեան ի վերայ երկեցունց դրուագեալ հատուածին»:

Նշանակում է «աւանդուեց մեզ այս Մովսէս խորենացու՝ չորրորդ գլխի (գլխում) խոստացած վերադարձ (վերադարձութեան, նոյն է մնացորդաց) պատմութեան մէջ, վե-

1. «Մեղանը» արդեօք առանց թովմայի պատմութիւնը կարգալիւ, թէ ընթերցողներին մոլորեցնելու համար է գրել. «Սեբէոս, Յովհաննէս կաթողիկոս, նոյն իսկ ինքը թովման . . . յոռնին մի այնպիսի երբ ըսեմ, որ չգտնուէր մեր այժմեան ունեցած խորենացու երեք հատորներով» (ինքն է ընդգծել). եր. 21—22:

րադարձ՝ երկու բաժան — անջատ (գրուադեալ) հատուածների վերայ: Ուրեմն, ոչ թէ «չորրորդ դրուագում աւանդուեց» այլ՝ խոստացուեց «սկզբանն», իսկ վերադարձ պատմութեան մէջ՝ աւանդուեց. և վերադարձութիւն ոչ թէ «երկու գրքերի վերայ», այլ՝ (ա. գրքի) Դ. գլխի) երկու հատուածների վերայ:

Թէպէտ մի այլ կերպ ևս կարելի է հասկանալ. — «աւանդուեց մեզ այս Մովսէս խորենացու խոստացուած վերադարձ (մնացորդաց) պատմութեան չորրորդ գլխում»: Բայց առ այժմ՝ առաջինն է ընդունելի, որովհետեւ (ա. գրքի) Դ. գլխում խոստացուած լինելը արդէն փաստ է, որոնք հատուածիս սկզբում առաջ բերեցի միւսների հետ, մինչ վերադարձ պատմութեան չորրորդ գրքի Դ. գլխի բովանդակութիւնը՝ այժմ անյայտ և անստոյգ:

Խորենացու Հ. պատմութեան չորրորդ գրքի եղած լինելը այլ ևս անտարակուսելի է, ոչ միայն խորենացու այնքան յաճախ և մինչև անգամ վերջին գ. գրքի վերջին գլխում («աղտաքոյ այսց գրոց») խոստման վերայ մեր վստահութեամբ, այլ և թովմայի կրկնակի եւ երրակի պարզ եւ հաստատուն վկայութիւններով: Դերապատիւ Հ. Ալիշանը իրաւունք ունի հաւատով և ըզձիւք տենչա-

չու «ոչ տեսանել զմահ, մինչև տեսցէ» Խորենացու չորրորդ գիրքը:

Ինչ կը լինէր չորրորդ գրքի պարունակութիւնը, ինչ հասուածներ կամ զուխներ կան ներկայ Խորենացու մէջ կամ արտաքոյ՝ որ ոմանք կարծել են չորրորդ գրքից մնացած հետքեր, այս հարցերը թողնելով մի կողմ, ես այժմ կասեմ, դարձեալ իբրև նոր բան, որ Խոր. չորրորդ գրքի գոնէ այն նիւթերի մասին, որոնց Խորենացին խոստանում էր վերադառնալ, այդ ընդորի մասին խօսեցուած են Թովմայի գրքի մէջ: Այս տեղ նորանից արտագրել աւելորդ եմ համարում, ցանկացողները թող կարդան.— Ենովսի մասին՝ եր. 14, Ենովքի՝ եր. 15, Եփեսոսի («գտակ հրոյ»)՝ եր. 27—28 և 30, Ագաթի, Նոյի, Սեմի, Բամայ, Յաբիթի, Բելի, Շամիրամի, Նինոսի, Զրադաշտի առասպելների, և ինչ մասին՝ եր. 17—31, ս. Սահակ Պարթևի մասին—նորա 120 տարեկան լինելը՝ եր. 74. որոնք չունին մեր և՛ միւս պատմիչները, և որոնք առնուած են չորրորդ, այսպէս կոչուած, գրքից¹:

1. Զրադաշտի առասպելներից կայ Նոյնէն մէջ.— Մեհրաբեհեհի նամակը. իսկ Վարդան բարձրագոյն պատմութեան մէջ (եր. 11—12) տես Ենովսի երկու արձանագրութեանց մասին:

Ը.

«...»:

Խորենացին յաճախ գործածած ունի. «աստ ուրեմն» (մին մակբայ միւսը շաղկապ) բառերը միասին՝ իբրև ժամանակական մակբայ (եր. 18, 21, 39, 42, 43, 111, 164), որ պէտք է, առանց բացառութեան, հասկանալ, յետոյ, յետին ժամանակներում, վերջերում. սակայն աշխարհաբառ թարգմանութեան մէջ չեն հասկացուած և փչացրել են բնագրի իմաստը:

Թ.

«...»:

Մար Աբայ Կատինայի բերած գիրքը սկսուած է «Ահեղ և երեկիք առաջինն ի դիցն...: Եւ ի սոցանէ հատեալ գտան ազգ սկայիցն» (ա. դիւք, Թ. եր. 31):

Պէտք է թարգմանել «Ահեղ և երեկի էին շատուածների առաջինները...: Եւ սոցանից սերունց—առաջացաւ հսկաների ազգը»:

Գիտենք որ մարդկութեան հինները աստուածացնում—պաշտում էին թագաւորներ:

րին» քաջերին. բռնաւոր Բեկին և շատ ուրիշներին աստուածացել — պաշտել են, Ձինացոց կայսրը այսօր ևս երկնքի որդի է կոչւում: Խորենացուց ևս տեղեկանում ենք՝ որ «քերթողքն տսեն, մեքձագաւակք և մօտասէրք գոլ և նոյնասերմանք ասուածոց իշխանք» (ա. գիրք, ԿԵ. եր. 403):

Սակայն Մար Արասի գրքի «չաստուածների առաջինները» միք պիտի հասկանանք:

Խորենացին Բիւռոսեան Սիբիղդիայից առնելով գրում է.

«Յառաջ քան զբուրդն, ասէ, . . . Զբուռնն, Տիտանն և Յարեթոստէ լինէին իշխանք երկրի: Որ ինձ թուին Սեմ, Փամ և Յարեթ: Եւ ի բաժանել սոցա, ասէ, զամենայն տիեզերս ընդ իւրեանց իշխանութեամբ, հարստացեալ տիրէ ի վերայ երկոցունցն ևս Զբուռնն: Զոր աս ուրեմն Զբաղաշտ մող արքայ Բակարիացուց, որ է Մեղայ, սկիզբն եւ հայր ասուածոց ասաց լինել, և բազում ինչ զնմանէ առասպելիաց» (ա. գիրք, Զ. եր. 21—22):

Ըստ այսմ առանց երկմտելու պէտք է ընդունել՝ որ «Ահիզք և երեւելիք առաջինքն ի ղիցն» գրուած է Զբուռն, Տիտան և Յարեթոստէի մասին:

Ժ.

«Ի յոմանիս կողման»:

Խորենացին բացատրելով մեր Հայաստան երկրի արեւմտեան մասերի «առաջին և երկրորդ, այլ և երրորդ և չորրորդ Հայք» կոչուելու պատճառը՝ յաւելացնում է.

«Իսկ որ այլ ի յոմանց ասի ի յունական կողմանն, մեզ ոչ է հաճոյ, այլոց որչափ կամք իցեն» (ա. գիրք, ԺԳ. եր. 49):

Գերապատիւ Խորէն եպիսկոպոսը թարգմանել է.

«Իսկ ինչ որ ուրիշներն են ասում այս մասին յունական կողմում, մեզ ընդունելի չէ, ուրիշներն ինչպէս կամենան»:

Սա առաջինը կամ վերջինը չէ, ամենքն էլ այդպէս են թարգմանել, ամենքն էլ այդպէս են հասկանում: Սակայն թող յանդգնութիւն չհամարուի՝ որ ես այժմ վարադրը յետ քաշեմ և հայրենասէր Խորենացու սեպհական միտքը վերհայեցնեմ — հասկանալի կացուցանեմ: Բայց նախ բնագիրը կազմեմ իմ հասկացածի համաձայն և արդի գրական լեզուի գրութեան ձևով. —

«Իսկ որ այլ ի յոմանց ասի «ի յունական կողմանն», մեզ ոչ է հաճոյ, այլոց որչափ կամք իցեն»:

Որ կը թարգմանեմ. «իսկ որ ոմանք այլ կերպ են անուանում—«յունական կողմում» («յունական կողմն»), մեզ հաճելի չէ, ուրիշներն որքան կը կամենան»:

Խորենացին զիտէր որ «մինչև ցայսօր ժամանակի անուանեն զկղիմայն զայն Պոռֆին (առաջին) Արմենիան» (Եր. 48). նա դէմ չի կարող լինել Հայաստանը կամ նորա մասերը օտար լեզուներով անուանելուն (օտարները), սակայն դէմ է օտար անուններով կոչելուն— օտարացնելուն, «մեզ ոչ է հաճոյ»...

Խորենացին ինքը և ոչ մի անգամ գործ չէ անում «յունական կամ պարսկական կողմն» այդ օտարացուցիչ դարձուածը, այլ միշտ գրում է.

«արևմտեան մեր կողմն... զամենայն մասն բաժնին Պարսից... արևմտեայ կողմանց աշխարհիս, ի մասն ի բաժնին Յունաց... զմասինդ քո իշխանութիւն... նուազ կողմանն տիրել... զմասն Յունաց որ ի Հայս... զբնաւ կողմանս բաժնոյն Պարսից՝ բացի Յունաց մասնէն... իբրև ետես Մեծն Սահակ զայս ամենայն չարիս ի մասին Պարսից, գնաց նա զկողմամբ արեւմտից մերոյ աշխարհիս ի բաժնն մասինն Յունաց», ԿԸ, ԿԼՆ. (Եր. 347 (ուրիշ անգամ), 348, 349, 350, 353, 355 (Երկու անգամ), 358 (Երկու անգամ), 360, 371, 372 (Երկու անգամ), 373, 378 (Երեք անգամ), 379 (Երկու անգամ), 383 և 384):

Խորենացին ահա այսպէս և ստէպ ստէպ (347—384 երեսներում 28 անգամ, գուցէ աչքիցս խուսափածներ ևս կան.) խտրել է խնամքով իւր բառերի նշանակութիւնները, և յատկապէս զգուշացել Հայաստան աշխարհի մասերը «կողմն Յունաց, կամ կողմն Պարսից» չգրել երբեք: Եւ համարում է մեր երկրի արեւմտեան կողմերը Հայաստանի սեպհական մասեր.

«և զՅոյնս ոչ սակաւ ժամանակս ընդ իւրեաւ նուաճեալ հնազանդէր (Տիգրան Ա.): Եւ զսահման բնակութեանս ընդարձակեալ ի հինսն մեր հասուցանէ յեզերս ծայրից բնակութեանց» (ա. գիրք, ԻԳ. Եր. 74):

ԺԱ.

«ի գուսանականէն այս գտանի ժողովեալ ի դէւանի արքունեաց» (ա. գիրք, ԺԳ. Եր. 50):

Այս մի անգամը միայն պատահում է Խորենացու մէջ գուսանական (գուսան) բառը: Գուսան բառին բառարանի տուած նշանակութիւններն են. երգիչ, երաժիշտ, թըմրկահար, խեղկատակ, կատակերգու: Ե՛ւ զիտական Մ. Էմին նոյնպիսի նշանակութիւններ է տուել:

Եւ կարծում եմ որ գուսան բառը

մնացած լինի գովասան—գովասաց բառից, միջին ա—ն զեղչել են, իսկ վ տառը շատ հասարակ կերպով փոխուել է ա—գո(վ)ւ(ա)սան. ինչպէս և ուրիշ տեղ և փոխուել է վ. օրինակ. կանաւն՝ զրւում է (երբեմն) կաւնով. վ-ի և ա-ի կոխն անվերջ է . . .

Իմ այս կարծիքը աւելի հաւանական թուաց ինձ՝ երբ Թովմայ Արծրունու պատմութեան մէջ կարդացի «եռ տանել ընդ առաջ նորա նժոյգս մեծագարգս և երեւիս, և երգեցիկս և գովասացս» (գ. գլր. Ժ. եր. 184):

Մի և նոյն է ստան և ստաց. օրինակ. ստասան — ստասաց, վիպասանք — վիպասացք, և ին:

ԺԲ.

«Եւ ի հեղուածս արուեստին՝ որ զբարամբ՝ հայեցեալ ուրուք, որպէս նաւայոյ ինչ հեղման հայեցողացն երեւցուցանեւ կարծիս» (ա. գլր. Ժ. եր. 56):

Դեր. Խորէն եպիսկոպոսը թարգմանել է¹. «նայելով քարերը ճարտարութեամբ մի-

1. Ես երբէք նպատակ չեմ ունեցել եւ չունիմ այդ թարգմանութիւնը, որ անթիւ սխալներ ունի, կամ միւսների սրբագրութիւնները, բացատրութիւնները, վարկածները քննադատելու. սակայն ի դէպ կամա—ակամայ խօսք է լինում նոցա մասին: Եւ ես ամեն անգամ պէտք

մեանց կապող աւազին ու կրին, նայողը կը կարծէ թէ ճարպ լինի թափած»: Եւ ծանօթութեան մէջ (100) վկայութիւն է բերում Շուլցի նկարագրութիւնից, թէ նա տեսել և կարծում է՝ որ մի տեսակ «խէժով մածած լինի» այդ ամբարտաւր:

Խօսքն այդ «ի հեղուածս արուեստին» խօսքը ոչ զեր. թարգմանողի աւազին ու կրին է համապատասխանում, և ոչ «որպէս ճարպոյ ինչ հեղման հայեցողացն երեւցուցանէր կարծիս» խօսքը՝ Շուլցի երազած խէժին: Շուլցը երեւի թէ հնադարեան մամուլ տեսնելով, միւս կողմից՝ Խօսքն այդ «ի հեղուածս արուեստին» խօսքից մոլորուելով՝ պիտի այդպէս կարծած լինի: Այդ բոլոր աւազ ու կիրը և խէժը առաջ են եկած «ի հեղուածս արուեստին» — երկու բառի չոր հասկացուելուց:

Արդեօք Խօսքն սրբազանին չի պատահել լսել՝ որ մի ընտիր ձեռագործ, մի ճարտարարուեստ գործ հիացմամբ դիտելու ժամանակ ասում են. «վարպետը — ուստան խնլք է թափել, շնորհք է թափել, ուստայութիւն,

չեմ համարի ասել թէ ուրիշներն այս կամ այն կտորներն ինչպէս են հասկացել կամ թարգմանել կամ բացատրել, ցանկացողներն իրենք թող նայեն տեսնեն . . .

մարիֆանթ է խարջել» հայ ժողովրդական դարձուածները:

Ահա ճիշդ այդպէս Խորենացին կամենում է ասել. «քարերի վերայի սահուն արուեստի զեղումը («ի հեղուածս») նայողին կարծել է տալիս թէ ճարպ լինի թափուած»...

ԺԳ.

«Շինէ... ապարանս... կրկնայարկս և եռայարկս. և ըստ պատենի իւրաքանչիւր՝ արեգակնակս» (ա. գիրք, ԺԶ. եր. 57):

«արեգակնակս» բառը թարգմանել է «վերնատուններ» և ծանօթութեան մէջ (101) ասում է. «Արժ. Եղիշէ վարդապետ Դուրեան արեգակնակ բառը վերնատուն (belvédér) է թարգմանում: Թարգմանիչներն այս բառը արևի կողմն են հասկացել. на востоке, nach der Sonne»:

Կարող եմ Խորեն օրբազանին ապահովացնել՝ որ Դուրեանը այդ արտագրել է Նորայր Ն. Բիւզանդացու գաղղ.—հայ. բառարանից (եր. 142): Նորայր Ն. Բիւզանդացին terrasse-ը ևս թարգմանում է միանալով տանիք՝ արեգակնակ... Իսկ Ամբ. Դալֆայեանն էլ «արեգակնակ» թարգմանել է

balcon¹: Խորենացու մէջ «արեգակնակս» ածական է «ապարանս» բառի, չի կարող զոյական թարգմանուել կամ վերնատուն համարուել: Խորենացուն չէին պակասի բառեր — վերնատուն, վերնասրահ, հովանոց, պատշգամբ, ճեմնայարկ, վերնայարկ ճեմնի, ճեմնի տանեաց, և չն:

Պէտք է, առանց այլեայլութեան, «արեգակնակս» թարգմանել արեւառնող, արեւաթափանց, արեւահայեաց (արեգ և ակն) ապարանքներ: Որպիսի բնակարանի առաւելութիւնը — առողջապահական լինելը դեռ Շամիրամի ժամանակի մարդիկ գիտէին...

Վերջապէս վերնատունը չէ՛ միայն որ կարող են արեգակի ճառագայթները ողողել և ընդ հակառակն. այլ և ամեն վերնատուն belvédère չի կարող լինել, որովհետեւ belvédér—beau voir նշանակում է անպատճառ հեռուն նայող զեղեցկատեսարան (տե՛ս dict. Larousse):

1. «Անահիտ»-ի 2 թուի մէջ (եր. 64) կարդում ենք. «Ներսը պալատ մը կար կամարակապ ճեմնիքներով՝ ծածկուած՝ արեգակնակով մը զոր խաղիսմբ մը կը փակէր, ուր կայմեր շարուած էին վեարիոն մը պարզելու համար...»:

Թէ լեզուն հարստացնելու համար փորձեր են միայն՝ այդ ուրիշ բան է:

ԺԴ.

« և զյուռուքսն ի ծով, և բան ի նմանէ՝ ու-
լունք Շամիրամայ ի ծով » (ա. գիրք, ԺԴ. եր. 61):
Իսկ Թովմայ Արծրունին ունի « և բան յուռ-
քիցն՝ որ զնմանէ » (ա. գիրք. Գ. եր. 26):

Խորենացու և Թովմայի երկու տարբեր
ընթերցուածներից պէտք է եզրակացնել՝ որ
եղել է բան, զրոյց, երգ Շամիրամի բերանից
կամ նորա բերանը դուռած, կամ՝ նորա
մասին: Միանգամայն հաւանական է թէ այն
զրոյց—երգը սկսւում էր « Ուլունք Շամիրա-
մայ ի ծով » բառերով, որ և պատմում նո-
րա պարտութիւնը, հեռեակ փախուստը,
պապակուհիւր և ջրի կարօտութիւնը և խմե-
լը, այլ և հետապնդող սուսերաւորների վը-
րահասները և յուռութքները ծովը ձգելը:
Բայց այժմ իմ նկատողութեան իսկական
խնդիրն է « յուռութմն—յուռթից » բառը, որի
մասին և պիտի յայտնեմ մի օտարոտի
կարծիք, սակայն առանց երաշխաւորելու:

« յուռութք » բառարանի խօսքով, նշա-
նակում է կախարդանք, հմայք, բժժանք
(թախիմայ): Շամիրամի յուռութուլունքները
(յուռթուլունք) ի հարկէ ընտիր մարգա-
րիտների շարօցներ կը լինէին, որ նա փա-

խուստի և տաքնապի ժամանակ չգտնելով
նոցանից յուսացած օգնութիւնը՝ արհամար-
հած և ձգած պիտի լինի ծովը: Իսկ վիպա-
սան երգիչը այդ մարգարիտներին ափսոսացել
և չի թողել ծովի յատակում աւազի ու
տղմի մէջ անյիշատակ կորած, այլ՝ կուց-կուց
դրել է Վանայ ծովակի ձկնիկների (տառեխ)
փորը, որին Վաղարշապատցին, Այրարա-
տեան բարբառով՝ կոչում է ղուռութ. իսկ
մի քանի տեղերում,—Ղարաբաղում, Ղա-
զախում, Դանձակում, Ագուլիսում—կըրճա-
տելով կոչում են ղուռութ:

Արդեօք Շամիրամի յուռութքների ա-
նունով չէ՞ որ ձկնկլկլը կոչուել է ղուռութ,
կամ թերեւս ընդհակառակն¹:

ԺԵ.

« Յայտնեն զայս ճշմարտապէս և բուելեացն
երգ » (ա. գիրք, Լ. եր. 87):

Խորենացու մինչև ցայսօր չհասկացուած
տեղերից մին է « թուելեաց երգը » խօսքը:
Սորա մասին նոյնպէս տարբեր կարծիքներ

1. Տաճկահայաստանի բարբառների մէջ և եւ յ
տառերը յաճախ հնչում են իս կամ դ. օրինակ. խաց,
խափշտակեց, եւլն, Նոյն իսկ Թովմայ Արծրունու պատ-
մութեան մէջ շատ պատահում են նման ընթերցուածներ:

յայտնուած են, մինչ պ. Մ. Աբեղեանինը (Արարատ 1899 թ. մարտ եր. 138—142):

Աստուածաշունչ գրքի առաջին հինգ գրքերի (հնգամատեան) մին կոչուում է «Թիւք» կամ «Թուոց գիրք»: Այդ գրքի «նախադրուածք» (Հոհրապեան. եր. 253) գրքի այդպէս կոչուելը տալիս է այն պատճառին՝ որ նորա մէջ պատմուում է իսրայէլեան ժողովրդի համարելը. ինչպէս և «ճննդոց գիրք» կոչուում է՝ արարչագործութիւնը պատմելու համար, այդպէս և միւսները, այսինքն «լսող գործոյն է անուանադրութիւն»:

Սակայն դեռ Թուոց գրքից առաջ, Նլից գրքում (այլ և շատ յետոյ, Դաւթի օրով, Բ. Թագ. ԻԴ. 9) արդէն երեք անգամ համարել էին իսրայէլի ժողովուրդը (Նլից, Ա. 1—5, Լ. 12—14, և ԼԸ. 25): Թուոց գրքում ևս, այո՛, դարձեալ համարել են երկու անգամ (Թիւք, Ա. 2—46, և ԻԶ. 2—63): Եթէ այսպէս, ուրեմն համարելը միայն և եթ յատուկ չէ եւ ոչ ըստական «Թիւք» կամ «Թուոց գիրք» կոչուելը բացատրելու համար:

Այդ գիրքը Թիւք կամ Թուոց գիրք կոչուել է, ըստ իս, համարելու այն արձանագրական ձեւի պատճառաւ՝ որ գտնուում ենք միայն այդ գրքում.—

«Առէք (ասէ Տէր) զհամար ամենայն ժողովրդեան որդւոցն իսրայէլի, ըստ ազգս. ըստ տանց նահապետաց, ըստ բուոց յանուանէ՛ ըստ գլխոցն նոցա. ամենայն արու ի քսանամենից և ի վեր...: Եւ այս են անուանք արանցն որ յանդիման լինիցին ընդ ձեզ: Ռուբինի՛, Նդիսուր որդի Սաղիուրայ: Շմաւոնի՛ Սաղամիէլ որդի Սուրիսագայի: Յուդայի՛ Նաասոն որդի Ամինադաբայ: Իսաքարայ՛ Նաթ... Էլն (12 ցեղերի իշխանները՝ օրոնք Մովսէսի և Ահարոնի հետ ներկայ պիտի լինէին ժողովրդի համարելուն): Եւ մտին ի հանդէս ըստ ազգաց իւրեանց, ըստ նահապետաց իւրեանց, ըստ բուոյ անուանց նոցա, ի քսանամենից և ի վեր, ամենայն արու ըստ գլխոց իւրեանց...: Եւ եղեն որդիք Ռուբինի՛ անդրանկանն իսրայէլի, ըստ ազգս իւրեանց, ըստ գունդս իւրեանց, ըստ տանց նահապետաց իւրեանց, ըստ բուոյ անուանց իւրեանց, ըստ գլխոց իւրեանց, ամենայն արու ի քսանամենից և ի վեր, ամենայնի որ ելանէր ի զօրսն Իսրայէլի, հանդէս նոցա յազգէն Ռուբինի, քառասուն և վեց հազար և հինգ հարիւր:—Եւ որդւոցն Շմաւոնի ըստ ազգս իւրեանց, ըստ գունդս իւրեանց, ըստ տանց նահապետաց իւրեանց, ըստ բուոյ անուանց իւրեանց, ըստ գլխոս իւրեանց, ամենայն արու ի քսանամենից և ի վեր, ամենայն որ ելանէր ի զօրսն Իսրայէլի, հանդէս նոցա ի ցեղէն Շմաւոնի, յիսուն և ինն հազար և երեք հարիւր:—Եւ որդւոցն Յուդայ՛ ըստ ազգս իւրեանց... ցվերջ (Թիւք. Ա. 2—46):

Այսպէս Մինայի անապատում Յակովբի

12 որդոց ցեղերը կարգաւ ըստ աւագութեան յանուանէ թուում, շարում և զատ-զատ արձանագրում է:

Թուոց Բ. գլխում (2—32) Աստուած գունդերի և բանակների առանձին առանձին կարգերն է որոշում և թէ որ բանակը որ կողմը պիտի բռնէ.—

«Նւ որ յառաջագոյնն բանակեսցին յարեւից կողմանէ՝ ցեղ բանակին Յուդայ իցէ՝ հանդերձ զօրուն իւրեանց, և իշխան որդւոցն Յուդայ Նաաթոն՝ որդի Ամինադարայ, և զօրք նորա անցեալք ի հանդիսի, եօթանասուն և չորք հազարք և վեց հարիւր: Նւ որք բանակեսցին զհետ նոցա՝ ցեղն Իսաքարայ իցէ, և իշխան որդւոցն Իսաքարայ, Նաթանայէլ որդի Սեղիովրայ, և զօրք նորա անցեալք ի հանդիսի՝ յիսուն և չորք հազար և չորեք հարիւր: Նւ բանակեսցին առ նոքօք ցեղն Զաբուղոնի և իշխան որդւոցն Զաբուղոնի Նղիաբ որդի Քիլոնի. և զօրք նորա անցեալք ի հանդիսի՝ յիսուն և եւթն հազար և չորեք հարիւր: Ամենեքեան անցեալք ի հանդիսի բանակին Յուդայ, հարիւր և ութսուն և վեց հազար և չորեք հարիւր, հանդերձ զօրուն իւրեանց յառաջագոյն չուեսցեն (առաջին բանակ):—Դունդ բանակին Ռուբինի ընդ հարաւակողմն և զօրն նոցա. և իշխան որդւոցն Ռուբինի, Նղիսուր» . . . ցվերջ:

Այսպէս կազմում է չորս բանակներ և կարգում առաջինը արեւելեան կողմից, եր-

կրորդը՝ հարաւից, երրորդը՝ ծովի կողմը, չորրորդը՝ հիւսիսից: Իսկ Ղեւտականք՝ վկայութեան խորանը բարձած՝ մէջտեղից պիտի գնային:

Թուոց ԻԶ. գլխում (2—64), Երեքովի հանդէպ, Յորդանանու եզերքում

«Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի . . . կալ զհամար ամենայն ժողովրդեան որդւոցն իսրայէլի, ի քսանամենից և ի վեր, ըստ տանց նահապետաց իւրեանց, ամենայն որ ելանիցէ յիսրայէլէ տալ պատերազմ . . . Ռուբէն անդրանիկն իսրայէլի, և որդիք Ռուբինի, Նոք, և գունդն Նոքայ. Փալլուս, և գունդն Փալլուսայ. Քարմի, և գունդն Քարմայ. Ասրոմ, և գունդն Ասրոմայ: Սոքա են գունդք Ռուբինի. և եղև հանդէս նոցա, քառասուն և երեք հազարք եւթն հարիւր և երեսուն:—Նւ որդիք Փալլուսայ Նղիաբ. և որդիք Նղիաբու՝ Յամուէլ, և Դադան և Աբիրոն. սոքա էին անուանիք ժողովրդեանն. և սոքա են՝ որ յարեան ի վերայ Մովսիսի և Ահարոնի ի ժողովրդեանն Կորխայ յարուցելոյ հակառակ տեառն, և բացեալ երկրի զբերան իւր եկուլ զնոսա, և զԿորխ՝ մահուամբ ժողովրդեանն իւրոյ. յորժամ եկեր հուր զերկրիւր և զյիսունսն. և եղեն նշաւակ. և որդիք Կորխայ ոչ մեռան: Նւ որդիք Շմաւոնի, և գունդք որդւոցն Շմաւոնի, Յամուէլ, և գունդ մի Յամուէլի. Յամին և գունդ մի Յամինայ. Յաքին և գունդ մի Յաքինայ. Զարայ և գունդ մի Զարայի. Մաւուլ և և գունդ մի Մաւուլայ: Այս են գունդք Շմաւոնի ի հանդիսի իւրեանց. քսան և երկու հազարք և երեք հարիւր:—Նւ որդիքն Յուդայ» . . . ցվերջ:

Այսպէս պատմական համառօտ ծանօթութիւններով հանդերձ կարգաւ յանուանէ թուով շարուած է իսրայէլի 12 ցեղերը և զատ-զատ արձանագրում:

Եւ ԼԳ. գլխում (2—49) նորից դառնալով կարգաւ յանուանէ թուելով շարում է 40 տարի անապատում թափառելու բանակատեղիները, — Յգիպտոսից մինչև Յորդանանու եզերքը, պատմական համառօտ ծանօթութիւններով. —

« Զուեցին յՌամեսսեայ յամսեանն յառաջնում... բանակեցան ի Սոկքովթ: Եւ չուեալ ի Սոկքովթայ՝ բանակեցան ի Բովթան, որ է մասն անապատին: Զուեցին ի Բովթանայ, և բանակեցան առ բերանովն Նպիրովթայ, որ է յանդիման Բէելսեփոնայ, և բանակեցան հանդէպ Մակգովղայ: Զուեցին հանդէպ Նպիրովթայ, և անցին ընդ մէջ ծովուն յանապատն, և գնացին նոքա երեքօրեայ ճանապարհ ընդ անապատն, և բանակեցան զգառն աղբերքքն: Զուեցին ի դառն աղբերացն՝ և եկին յնղիմ. և էին յնղիմ երկրորտասան ակն ջրոց, և եւթանասուն ծառ արմաւենեաց, և բանակեցան անդ առ ջրովն: Զուեցին յնղիմայ և »... ցվերջ¹:

1. Յերուի շատ արտագրեցի ս. գրքից, սակայն ընթերցողներեց քանիսը կրիմէին Աստուածաշնչին, եւ դեռ չեմ ասում թէ քանիսը կունենան... գոնէ հետաքրքրուողները թող կարդան յեղած գլուխները աւերաց, եւ յոյս ունիմ որ աւելի կհամոզուին իմ բացատրութեանը:

Եւ այսպէս, կարծում եմ որ «Թիւք» և «Թուելեաց» բառերը կիրառութեան կողմից ևս համանշանակութիւն պիտի ունեցած լինին մի և նոյն դարում գրողների մօտ:

Վերջապէս թուել նշանակում է զատ-զատ յանուանէ թուել—շարել, և ոչ թէ համարել. օրինակ, մենք կարող ենք ասել. թուեցէք ձեր ծառայութիւնները, ուսանելի կամ աւանդելի առարկաները, բարեկամները, ծանօթները, տեսած քաղաքները, երկիրները, լեռները, ծովերը, ևլն, և դուք յանուանէ կարգաւ կըթուէք—կըշարէք: Նոյնպէս կարող ենք ասել. համարեցէք այս գառները, ծառերը, խրճները, դէզերը, մշակները, զինուորները, աշակերտները, ևլն, և դուք կըհամարէք. —մէկ, երկու, երեք, չորս... Սխալ կըլինի եթէ թուելը համարել հասկանանք կամ ընդհակառակն: Թուելու համար հարց տրւում է—որո՞նք, իսկ համարելու—քանի՞:

Ուրեմն «Թուելեացն երգք» (յորս շարին բանք երգոցն զԱրտաշիսէ և զորդոց նորա) եւ հասկանում և բացատրում եմ— նահապետների, թագաւորների, իշխանների մասին յօրինուած անուանական երգեր, երևի թէ որ և է կարգաւ խմբուած, որոնք յանուանէ թուում և ընդ նմին պատմում

էին վիպաձև իւրաքանչիւրի գործերը. որոնց հատուկտորներէց օգտուել է Մորենացին¹:

Մորենացու թարգմանութեան մէջ պէտք է ամփոփոխ պահել «թուելեաց երգք» բառերը՝ իբրև յատուկ անուն երգի տեսակի, այնպէս՝ ինչպէս ուրիշ երգերի տեսակներ անուանուած են թէ՛ գրաբառում և թէ՛ աշխարհաբառում. օրինակ. մեղեդի, շարական, տաղ, զանձ, ողբերգ, զովք, պարերգ, ջանգիւլում, սիրերգ, թուելեաց երգք . . .

Անշուշտ առաջ նոյնպէս երգերի շատ տեսակներ կը լինէին:

ԺԳ.

«Այլ և տենչայ, ասեն, Սաթենիկ տիկին տենչանս՝ զարտախուր խաւարտ և գտից խաւարծի ի բարձիցն Արգաւանայ» (ա. գիրք, Լ. եր. 88):

1. «Յայտնեն զայս ճմարտապէս և բռնելեացն երգք... յորս յարին բանք երգոցն զԱրտաշիսէ եւ զորդւոցն նորա, յիշելով աշխարհաբար եւ զգարմիցն Աշուհ...» (եր. 87—88): — «Եւ ընդ վիշապաց ասէին յերգն կռռել նմա եւ յաղբել (վահագն), եւ կարի իմն նմանագոյնս զհերակլեայ նահատակութեանցն նմա երգելին» (ա. գիրք, ԼԱ. եր. 90): — «Կարի իմն անյարմար բռնելն նմա երգ բաժիցն վասն ուժեղութեանն եւ սրտեայ լինելոյն... քանզի երգելն նմա բռնեն հարկանել զորձաբար» . . . (բ. գիրք, Ը. եր. 114): — «Այս ամենայն յայտնի են քեզ յերգս վիպասանացն» (բ. գիրք, ԾԹ. եր. 187):

Ուրիշների այնքան բացատրութիւնների մէջ հակուած լինելով հաւանական համարելու միայն պրօֆ. Գ. Մալաթեանցի ցոյց տուած այն կախարդական միջոցը՝ «թէ բոյսեր, յատկապէս ռեհան, ծածուկ պահում են մէկի քարձի մէջ՝ որի սէրն ուղում են գողանալ, և մի որոշ ժամանակից յետոյ հանում տանում են նորան՝ որ փափագում էր առաջինի սէրը, — այլապէս ենթադրում եմ ես՝ որ «ի քարձիցն» բառը գործածուած լինի ի քարձանց բառի նշանակութեամբ (բարձունք — բարձանց, քլուրներ, լեռներ գաւթներ):

«Զարսախուր, խաւարս եւ զսից խաւարծի» — բոյսեր են, այժմ վերջինը միայն ծանօթ. Մաւարծի—խաւարծիլ յայտնի ընտիր բանջար է՝ թթուաշ համով և շատ տխորժելի. թրքերէն կոչւում է իշխուն: Այրարատեան նահանգում ճարւում է միայն Վայոց ձորի (Դարալագեազ) լեռներում. բայց ամենաընտիր տեսակը, ինչպէս ճաշակած գիտեմ, գտնւում է և՛ պարսկական սահմանում Մարանդի լեռներում: Վայոց ձորը լեռնային գաւառակ է Շարուրի, իսկ Շարուրը և Նախիջևանի գաւառը սեպհական կալուածք էին Արգաւանայ (ա. գիրք, Լ. եր. 86—88):

և ք. գիրք, ծԱ. եր. 191—192):—Արգա-
ւանը Աշգահակի սերունդից՝ Մար էր, մի և
նոյն ժամանակ Հայոց թագաւորի երկրորդը.
ոչ հեռի Մարանդը նորա իշխանութեան
սահմանումը պիտի լինէր, թերեւ և նորա
կամ Աշգահակեան Մարերի բնակութեան
կեդրոնավայրը (Մար-անդ) ¹:

Եւ ահա լեռնցի տիկին Սաթնիկի կա-
նացի սիրտը ուզում էր Արգաւանայ քա-
ղանց (բարձից) վերայ միայն բռնանող խա-
ւարծիլ... ²:

1. «Սահակ որդի Վաչէի կացեալ է դրանն Ար-
տաշէսի շքեղ եւ երեւելի ճոխութեամբ, յոր ձեռն հա-
ւատաց Արտաշէս զգաւառն Աղբադ, զի յայն վայր (ժա-
մանակում) ումանք ի գարմիցն Աշգահակայ Մարի բնակիւն
անդ, արք քաջք կորովաղէնք եւ դիպաղեղունք, բայց
նուաղեալ ազգին ոչ զոր ունէին որ կարող լինէին զգործ
պատերազմին վճարել եւ զպալտօն թագաւորիւն. մանաւանդ
զի աւերեալ էր երկիրն յասպատակէ Պարսից» (Թովմայ
Արծ. ա. դպր. Ը. եր. 54):—«Եւ յերթալն նորա (Հա-
մամ) եւ ի դառնալն դայ դտանէ վախճանեալ զթագա-
ւորն Արտաշէս ի Մարիեք (Մարանդ), եւ մեռանի ան-
ձամբ ընդ այլ շղոմարարսն յայնարիւն Մարաց ի Բակու-
րակերտ աւանի» (նոյն. եր. 55—56):

2. Այդպիսի անսովոր հոլովի երկու օրինակներ
կան (տէս մեծ բառերը հայկազեան լեզուի), որ փո-
խանակ բարձից՝ գրուած է բարձանց. այստեղ էլ ընդ հա-
կառակն, փոխանակ գրելու ի բարձանց՝ գրուած է ի բար-
ձից: Ոչ մի օրինակ չկայ Խորենացու Հ. պատմութեան
մէջ, որից իմանայինք թէ նա ինչպէս էր հոլովում բարձր

ԺԷ.

«ու Արամադդ ուի այլ»...

Առաջ գնալով ես այժմ հասայ մի լա-
բիւրինթոսի, ուր բոլոր թարգմանողներ և
ուսումնասիրողներ խորխափել են՝ ելք չգտնե-
լով: Բարձրից կամ հեռուից (մասին) խօսե-
ցած լինելու հրապոյրը շատ անգամ չի թող-
նում որ մարդիկ իրենց ոտքերի առաջ լա-
տեսեն: Ես կընտրեմ ինձ համար բոլորովին
մի նոր ուղի՝ ուրիշներից անտես արուած,
և կըփորձեմ լուսաւորել և անցնել այդ լա-
բիւրինթոսը:

Ծորենացին գրել է.

«սիրեմ կոչել այսպէս ըստ քաջութեան, Հայկ,
Արամ, Տիգրան. ըստ իմ՝ քաջաց ազգք քաջքն. իսկ
միջոցքն՝ որպէս դէսլ ումեք թուիցի կոչել: Բայց
ըստ դիւցազնութեանն կարծեաց՝ ճշմարիտ է և
ասելս մեր. ոչ Արամադդ ու, այլ ի կամեցողսն լի-
նել Արամադդ, չորից եւս այլոց անուանելոց Արա-
մադդ, յորոց մի է եւ Կունդ ումն Արամադդ: Այս-
պէս և բազումք անուանեալ Տիգրանք, մի է և մի-
այնակ ի հայկազանցս, որ զԱշգահակ սպան, և

բառի յոգ. սեռականը, իսկ «բարձից» (բարձ) կայ եր-
կու անգամ: Միանգամայն եւ հաւանական է որ գրիչ-
ների վրիպակ եղած կլինի...

գտուն նորա ի գերութիւն վարեաց, և զԱնոյշ մայրն վիշապաց. օժանդակ կամօք և յօժարութեամբ զԿիւրոս ունելով, զիշխանութիւն Մարաց և Պարսից յինքն յափշտակեաց» (ա. դիրք, ԼԱ. եր. 89):

Մախ պարզ ոճի վերածեմ գծուարացնող կտորը, և այն ամենայն հարազատութեամբ բնագրի.—

«ոչ Արամազդ որ (ի) չորից ևս այլոց անուանելոց Արամազդ, յորոց մի է և Կունդ ոմն Արամազդ, այլ ի կամեցողսն լինել Արամազդ»:

Թարգմանեմ. — «Միտում եմ այսպէս քաջութեան կողմից թուել (կոչել) Հայի, Արամ, Տիգրան. ըստ իս՝ քաջերը քաջերի սերունդներ են, իսկ մէջտեղիները՝ ում ինչպէս յարմար կըթուի անուանել: Բայց զիւցազներգօրէն խօսելով՝ մեր ասելը ևս ուղիղ է. (Տիգրանը) չէ Արամազդ որ միւս այլ անուանեալ Արամազդ չորսից, որոնցից մին — քաջալի մէկն է՝ Արամազդ է կոչուած, բայց ցանկացողների համար թո՛ղ (Տիգրանը) լինի Արամազդ: Այսպէս և անուանեալ Տիգրաններ շատերը կան, բայց մի և միակ հայկազուն Տիգրանն է, որ սպանեց Աշդահակին, գերեվարեց նորա տունը և վիշապազունների մայր Անոյշին. ունելով Կիւրոսին բարեհաճ իրեն օժանդակ, Մարաց և Պարսից իշխանութիւնը (գերիշխանութիւնը՝ որ ունէին

Հայաստանի վերայ և տարեկան որոշեալ հարկ էին ստանում) իրեն սեպհականեց»:

Արամազդ զաղափարն է և որ մի է, ո՛չ չորս և ո՛չ «հինգ»: Զևս, Իւպիտեր, Դիոս, Որմզդ, Ահուրամազդ, Արամազդ, ևլն, ամենազգի լեզուներով կոչւում է նոյն Արամազդը: Միայն Հայերը ոչ թէ չորս, այլ կարող էին զանազան տեղերում և աւելի քան տասնաւոր անդրիններ — արձաններ ունենալ իրենց Արամազդի, այնպէս էլ ուրիշ ազգեր: Եւ զեռ ահա կարծում են թէ Խորենացին այս ինչ այն ինչ անդրինների հետ է համեմատում Տիգրանին, որոնցից մին կունդ էր ձուլուած, միւսը կարող էր խիտ մազերով լինել, մին «վրէժխնդիր» միւսն՝ բարի, մին քաղցրահայեաց միւսը՝ դաժան... Եւ Խորենացին, որ հեթանոս մատենագիր գոնէ չէր, որ Արամազդ զաղափարը միայն հասկանում էր՝ բայց Արամազդ չէր ճանաչում, ո՛ւր կը մնային արհամարհուած անդրինները, և զեռ իւր սիրելի Տիգրանին էլ պիտի համեմատէր կունդ, թող լինէր զանգրահեր, այդ անդրինների հետ!!!

Խորենացին այդ համեմատութեամբ ի նկատի ունէր չորս (ո՛չ «հինգ») մարդ (կենդանի թէ մեռած), մին կունդ. որոնք իբր թէ

քաջեր, անարժանապէս (անուանեալ) վերակոչուում էին Արամազդ . . .

Մնացեալն արդէն ասել եմ ¹:

ԺԸ.

«Երկներ երկին եւ երկիր, երկներ և ծիրանի ծով, երկն ի ծովուն ունէր զկարմրիկ եղեգնիկն. ընդ եղեգան փող ծուխ ելանէր, ընդ եղեգան փող բոց ելանէր. և ի բոցոյն պատանեկիկ վազէր, նա հուր հեր ունէր. ապա թէ բոց ունէր մօրուն, և աչկունքն էին արեգակունք» (ա. գիրք, ԼԱ. եր. 89):

Այս հնագոյն երգը մի ճարտար այլաբանութիւն է. սորա հաւանական բացատրութիւնը յայտնի է Կիւրեղ եպիսկոպոսի անունով:—«Երկներ երկին և երկիր (հայրը և մայրը Վահագնի), երկներ և ծիրանի ծով (մայրա-

1. Ա) Կոչեղ—կեղեղ, մյոժմ եւս գործածական են. տաճկահայոց մէջ մանաւանդ. — «գացի գլուխս կնդեղու» (սափրել): Կոչեղ նշանակում է մազից զուրկ գլուխ, ինչպէս լինում են առհասարակ քաջալները. Եղիսէ մարգարէին մանուկներ ծաղրեցին փողոցում. «Ել կնդակ. ել կնդակ», եւ նա անիծեց նորանց . . . Կոչեղ գլխատառով գրած թէ հասարակ՝ առանձին նշանակութիւն չունի, մի եւ նոյն է:

Բ) Պրօֆ. Գ. Խալաթեանը, Միաբանը եւ ուրիշներ «եւս» սխալ են հասկացել, որից հետեւացնում են ֆեկցերորդը (արձան Արամազդի) լինել, մինչ՝ «եւս» ասուած է «չորից աչոց» բառերի համար . . .

կան արգանդը)», իսկ «եղեգնիկն» — եղեգն թրքերէն կոչուում է դամիշ, որը հայ բժիշկներին յաճախ պատահած կը լինի ամօթխած հիւանդից լսել:

Մնացեալն արդէն հասկանալի կը լինի:

ԺԹ.

«Հասանէ ի միջոց աշխարհիս վերագոյն քան զակունս մօրին մեծի յափն Երասխայ, մօտ յԱրմաւիրն ուր ասի բլուր» (բ. գիրք, Գ. եր. 104):

Թարգմանել են. — «Հասաւ մեր աշխարհի մէջտեղը Մեծամօրի ակներից վերեւ Երասխի ափը, Արմաւրի մօտ, բլուր ասված տեղը»:

Եսխ, «միջնաշխարհ» ի միջոց աշխարհիս» համարւում է՝ ըստ հին մեծատեանագիրների, Այրարատեան նահանգը: Երկրորդ՝ «Մեծամօր» և «Մօր մեծ» Պարթեւացին խտրել է, և դոքա առանձին անուններ և գետեր են և գտնւում են առանձին առանձին տեղերում. բայց Թարգմանող և ուսումնասիրողները և՛ անգիտանում են և՛ շփոթում: Երրորդ՝ Արմաւիրը և՛ այսօր կոչւում է Թափայ (բլուր), երեւի բլրի վերայ շինուած լինելու պատճառաւ. «լինէ . . . ի վերայ ոստոյ միոյ առ եզերք գետոյն» (ա. գիրք, ԺԲ. եր. 40):

Արմաւիր և Բլուր¹ (Թրքերէն-Թափայ) նոյնն է. «փոխին արքունիքն յԱրմաւիրն անուանեալ բլրոյն» (բ. գիրք, ԼԹ. եր. 173):

Եթէ Արմաւիրը Խորենացու ժամանակ չէր վերակոչուած և՛ Բլուր, պէտք է ուրեմն կարծել որ՝ «որ ասի բլուր» բառերը իբրեւ ծանօթութիւն փակագծով յաւելացուած պիտի լինին Խորենացու բնագրի մէջ այն ժամանակից՝ երբ Հայաստանի առաջին մայրաքաղաքը Արմաւիր անունով հազիւ էր լսուած և սովորաբար Բլուր (Թափայ) անունով էր հասկացուած տեղացիներէր: Երևի յետոյ փակագիծն էլ աւելորդ են կարծել, ինչպէս պատահել է և՛ աւետարանում (ռաբրի, որ Թարգմանեալ կոչի վարդապետ):

Բայց դառնամ զնել այս տեղ վերի հատուածի ուղիղ Թարգմանութիւնը (իմ), որ է. — «Հասնում է միջնաշխարհը՝ Մօր մեծի (կամ, մեծ Մօրի) ակունքներից վեր Երասխի ափը, Արմաւրի մօտ՝ որ և Բլուր է կոչուում»:

Մօր մեծի ակունքները ուրեմն, ըստ Խորենացու, անկասկած այն է՝ որ գտնուում է ս. Էջմիածնից ուղիղ դէպ արեւմուտք, Սարդար-աբադ և Արմաւիր տանող ճանա-

1. Ո՛չ Արշարունեաց դաւառի (Սուրմալու) Բլուր գիւղը՝ Երասխի միւս կողմում:

պարհի վերայ՝ Այդրգեօլի տակ, Երասխի ձախ կողմից: Եւ ինքը Մօր մեծ գետը (Սև ջուր, Թրքերէն՝ Ղարասու) այն է՝ որի վերայից կամուրջով անցնում է Էջմիածնից Երասխ և Իգդիր տանող խճուղին, և որը կոր ընթացքով հեռանալով դէպ արեւելք՝ Թափուում է Երասխի մէջ (ձախ կողմից) Ռշպարլու և Մամադ-աբադ Թրքական գիւղերի մօտերքում, Հրազդանի խառնուրդից քիչ առաջ:

Իսկ «Մեծամօր» Խորենացին կոչում է այն գետը՝ որ սկսւում է Մասիսի հիւսիսային ստորոտից՝ Տաշբուռուն գիւղի մօտերից. դէպ արեւելք գնալով՝ անցնում է Ալիղզ (մի մասը Ակոռու կործանումից ապրածներ) գիւղի կողքով, և աւելի հեռանալով՝ Թըրքաբնակ Զուտուկ և Գեօդակու (ձախ կողմից), Էմինջայ և Ղարաբաղլու (աջ կողմից) գիւղերի մէջտեղով անցնելով և մօտ խառնուում է Երասխին (աջ կողմից), Խորվիրապից (Արտաշատ) ապա և մերձակայ Շխար (Թըրքաբնակ) գիւղից փոքր ինչ ցած, Կախանովի՝ Երասխից հանած առուի գլխին մօտ՝ հանգիստաց կողմից. —

«Երթեալ Արտաշխի ի տեղին, ուր խառնին Երասխ և Մեծամօր, և հաճեալ ընդ բլուրն, չինէ քաղաք յիւր անուն անուանեալ Արտաշատ» (բ. գիրք, ԽԹ. եր. 187):

Վարդան վարդապետ Բարձրբերդցի պատմիչը ևս Մեծամորը այս գետն է հասկացել. «ի յորս գետամոյն լինի առ կամբջոյն Մեծամորի՝ լիկեալ յայտոյ» (Եր. 51):

Իսկ Ազաթանգեղոսի մէջ «կէսքն անցեալ ընդ կամուրջն Վաղարշապատ քաղաքի՝ զոր կամուրջ Մեծամորի կոչեն» (Եր. 8) ընդգծածս բառերը (շփոթութեան միակ աղբիւրը) քաջարձակ սխալ է, կամ թիւրիմացութիւնից յառաջացած ընդմիջարկութիւն — յաւելուած, կամ «մեծամորի» բառի տեղ նախօրինակում եղած պիտի լինէր մեծ մօրի. ա սպրդել է մէջ:

Այս գետի (Մեծամոր) բերանը Արտաշատի բլրից հեռի կարող է լինել $2\frac{1}{2}$ վերստ, ուր և կըտարածուէր կըհասնէր քաղաքը: Գետի ամբողջ երկայնութիւնը 30—35 վերստ հազիւ լինի: Գեր. Հայր Ալիշանի աշխարհացոյցում սխալ է և՛ գետի անունը (կրկնակի սխալ), և՛ ընթացքը և՛ բերանի տեղը¹:

1. Խորենացու մէջ պատահած «Երեւել» դաշտի անունն ծագումն եւ իսկական տեղն իմանալու համար խնդրեցի Ալիշանի «Այրարատը»: Չգտայ իմ փնտրածը. սակայն դրքի աշխարհացոյցի վերայ նայելուս տեսայ Խորենացու Մօր մեծը Վանանդում դրուած, Մեծամորը՝ Գինոյ գետ անունով, իսկ Գինոյ գետը՝ Գարասու անունով: Նայում էի հետաքրքրական պատկերները. 464 երեսում՝ Արտաշատի խորհորատ ընկնելու պատկերը ու շաքրաւեց, կարդացի շուրջը եւ ահա տեսնում է հաւաստութիւնը եւ սխալը մասամբ ուղղւում. — «մինչեւ յա-

Մեծամորի (Խորենացու) խառնուրդից դէպ արեւելեան հարաւ 2 վերստ հեռւորութիւնից—Բոռօլան ասուած բլրաձև բարձրաւանդակից բղխում է Գինոյ գետը և ընթանում դէպ արեւելք: Գինոյ բլուրն այս Բոռօլան կոչուողն է. իսկ Թաքեալդուն, որ Սարգարբուլաղի սահմանն է հիւսիսից, հեռի է Գինոյ բլրից (Բոռօլանից) 15 վերստ՝ դէպ հարաւ արեւմուտք — Սարգարբուլաղ: Թաքեալդուն (իւր շրջապատով) ոչ թէ գետայլ մի փոքր առու էլ չունի. մի շատ նուազ աղբիւր միայն ունի, որի մօտ 15—20 ոռոս զինուորի (սահմանապահ) կայարան կայ այժմ:

կունս Գինոյ, այսինքն է ընդ մէջ Ակոռոց և Թաքեալդունի (Գինոյ բլր) Թափառել չորրորտանեացը...:

— Ուրեմն Գինոյ գետը պէտք էր զննել Ակոռոց դէպ արեւելք՝ ուր Թաքեալդուն է, իսկ Ակոռոց դէպ հիւսիսային արեւմուտք — Տաշքուռունի կողմը՝ զննել «Գարասուն» (Խորենացու Մեծամորը): Աշխարհացոյցում եւ շփոթել են երկու գետերի անունները, Այդ երեք գետերին — Մօր մեծ, Մեծամոր եւ Գինոյ գետ, տեղացիք կոչում են Ղարասու (թրքերէն), առաջինը միայն, մասնաւորապէս Վաղարշապատիք՝ կոչում են Սեւ ջուր:

Ի.

«Իսկ ի ցրտանալ հիւսիսոյ ի դառնահոտ փշելոյ, խաղայ իջանէ (Վաղարշակ) ի դաւեսն մեծ. և անդ զափամբ Մօրին մեծի բանակի ի տեղւոջ, ուր գետն մեծ ի ծովակէն հիւսիսոյ սկիզբն առեալ՝ իջանէ և խառնի ի Մօրն մեծ» (բ. գիրք, Զ. եր. 108):

Խորենացու այս հատուածի մէջ «Մօրին մեծի» և «ի Մօրն մեծ» բառերը թէ նոյն են՝ կասկած չի թողնում մանաւանդ «ի տեղւոջ, ուր» բառերի յարաբերութիւնը. և թէ Խորենացին «Մօր մեծ» կոչում է այն գետը, որի ափունքները գտնուում են ս. Էջմիածնից դէպ արեւմուտք՝ Այդրգեօլի տակ, Արմաւիր, Շահրիար և Սարգար-աբադ տանող ճանապարհի վերայ, այդ էլ ինքը Խորենացին է մատնացոյց անում, ինչպէս տեսանք նախնիքից ժամ. հատուածումն: Սակայն բոլոր թարգմանող և ուսումնասիրողներն առաջինը հասկանում և գրում են «Մեծ Մօր», իսկ երկրորդը՝ «Մեծամօր». կամ՝ մին գրում են «Մեծամօր» միւսն՝ «մեծ մահի՛մ», կամ՝ երկուսն էլ «մեծ մահի՛մ»: Զարմանք:

Ոչ միայն այս. — «դաշտն մեծ» գրում են «Մեծ Դաշտ», «գետն մեծ» գրում են

«Մեծ գետ», և «Մօր մեծի» հետ դնում են Վանանդում, իսկ «հիւսիսոյ ծովակն» էլ Գուգարքում: Բարեբաղդարար Արմաւիրը, Երասխը, Արտաշատը և Դուինը թողնում են Մասիսի և Արագածի հովտում . . .

Գերապատիւ Հայր Ալիշանը, որչափ և այս առուր հեղինակութիւն համարուի, այնու ամենայնիւ Խորենացու նկարագրի կռուանները, — Երասխ, Արմաւիր, Արտաշատ, Դուին, Մօր մեծ, Մեծամօր, այնպէս հաստատուն են՝ որ դաշտն մեծ, Մօրն մեծ, գետն մեծ և ծովակը հիւսիսոյ արտասահմանել չի կարող . . .

Ե՛ս ինչպէս եմ հասկանում այդ հատուածը. —

«Իսկ հողմերի դառնաշունչ փշելուց հիւսիսի ցրտելու ժամանակ, առաջ գնալով իջնում է մեծ դաշտի (Այրարատեան) մէջ. և այն տեղ Մօր մեծի (ձախակողմեան Սև ջուր) ափին բանակ է դնում (ոչ «բնակեց») այն տեղումը՝ ուր, մեծ գետը (Հրազդան) սկսուելով հիւսիսոյ ծովակիցը (Գեղամայ լիճ)՝ իջնում և խառնւում է Մօր մեծի (նոյն Սև ջուրը) մէջ»¹:

1. Մօր մեծը այժմ թէպէտ 5-6 վերստով առաջ է մտնում Երասխի մէջ՝ ապա Հրազդանը, սակայն այդ չնչին տարբերութիւնը կարող էր այսքան ժամանա-

դաշտն մեծ, գետն մեծ, ծովակ հիւսիսոյ, Խորենացին զրել է իբրեւ հասարակ անուն և ոչ թէ յատուկ անուն: Այսպէս և ուրիշ տեղում նա զրել է.

«բնակեցուցանէ յարեւելեայ հիւսիսոյ մեծի լեւրին... ի սպառուածի փլածի մեծի լեւրին» (ա. գիրք, Լ. եր. 87):

Հասկանում ենք որ խօսքը Մասիսի մասին է, և Մեծ լեռ չենք փնտրում...

Եւ հիւսիսոյ ծովակի մասին զրել է.

«Գնաց (Գեղամ) գոհա լեւամբն արեւելեան հիւսիսոյ, յեզր ծովակի միոյ» (ա. գիրք: ԺԲ. եր. 42):

Գեղամայ ծովակը ճշմարիտ որ ընկած է Արմաւրից դէպ արեւելեան հիւսիս, սակայն Մօր մեծի և Հրազդանի խառնուրդներից՝ տրամագծով ուղղակի հիւսիս է ընկնում, մանաւանդ ծովակի այն կէտը՝ որտեղից սկսւում է Հրազդանը²:

կամիջոցում առաջ դալ երկու գետերի մէկի կամ միւսի հունը դաշտի միջով փոխուելու հնարաւորութիւնից: Այս գետերի խառնուրդներից ուղղակի դէպի հիւսիս է ընկնում ծովի Գեղամայ ծովակը, որից սկիզբն է առնում Հրազդանը:

2. Մօր մեծի եւ Մեծամօրի տեղերը այսպէս ճշգրտելու եւ յատկացնելու դիտողութիւններիս յաւելացնում եմ եւ այն՝ որ եթէ Խորենացու Մեծամօրը լինէր Էջմիածնի մօտերից բղխող եւ անցնող ճախակողմեան (Երասխեց) Սեւ ջուրը (Մօր մեծ), ինչպէս ամենքը կար-

Այս գետախառնուրդներից թէ՛ դէպ արեւմուտք մինչեւ Վաղարշապատի սահմանը — ս. Էջմիածնի սեպհական խոտատեղիները՝ և թէ՛ դէպ արեւելք մինչեւ Խորվիրապ (պատմական Արտաշատ), 50—60 վերստ երկայնութեամբ ընդարձակ ջրաշատ և տափարակ խոտհարքներ (ղօռուխ), բանակ դնելու յարմար վայրեր են: Այս տեղերն և այս Մօր մեծն է հասկանում Ժ. դարու պատմիչ Թովմ. Արծրունին՝ երբ գրում է.

«Եւ քանզի էին բանակեալ ի խառնուրդս Երասխայ եւ Մաւրին մեծի... ի մէջ փակեալ զմարդպանն և զորդի նորա զՇիրոյ՝ ածեն ի Դուին» (Բ. դար. Ա. եր. 78):

Տե՛ս և նախընթաց ԺԹ. հատուածս Մեծամօրի և Մօր մեծի մասին:

Ծում եւ գրում են, Խորենացին չէր կարող ասել. «Երթեալ Արտաշեսի ի տեղին, ոչր խառնին Երասխ եւ Մեծամօր, եւ հաճեալ ընդ բլուրն, շինէ քաղաք յիւր անուն անուանեալ Արտաշատ», քանի որ այդ Մեծամօրի (Մօր մեծ) եւ Հրազդանի խառնուրդներից մի վերստ յետոյ գեռ դալիս է Աղատ գետի (Գառնի չայ) խառնուրդը եւ ապա 14—15 վերստ պէտք է անցնել՝ որ նոր հասնենք Արտաշատի սահմանը:

Այո, Խորենացին չէր կարող անտես առնել իրեն քաջ ծանօթ Աղատ գետը...

ԻԱ.

«Օրինադրէ (կարգէ) . . . : եւ զգեցուցանողս իւր զձեռնս ի զաւակաց քանանացուց » (Բ. զԻԲԵ, Է. ԵՐ. 109):

«Զձեռնէս» բառը երբեք չի կարող «ձեռնոցներ» կամ ձեռն բառի եզ. կամ յոգ. որ և իցէ հոլով լինել. մնում է կարծել, ինչպէս և Փրանսիացի պրոֆ. Բաումգարդներ, որ անշուշտ Ձեռնէս յատուկ անուն եղած լինի. Սակայն վերջին դէպքում՝ զգեցուցանող պէտք է որ լինէր և ոչ «զգեցուցանողս» — յոգնակի թուով:

Այլ և ենթադրում եմ որ, կամ Ձեռնէսը միայն էր կարգուած զգեցուցանող, կամ, եթէ «զգեցուցանողս» յոգնակի ընթերցուածը ուղիղն է՝ Ձեռնէսը ուրիշ ընկեր կամ ընկերներ պիտի ունեցած լինէր, որ ինձ աւելի հաւանականն է թուում, որոց անունները մեզ չեն հասել:

Ի դէպ. յաւելացնում եմ մի անմեղ կարծիք ևս. — տաճկահայաստանի նահանգներում, այլ և վաղուց մեր կողմերը գաղթած Հայեր գիւղական տանուտէրին յոէս են անուանում. արդեօք ձեռնէս և յոէս կապ չեն ունեցած երբեք . . .

ԻԲ.

«անյարմար թուէին նմա երգ բանիցն» (Բ. զԻԲԵ, Ը. ԵՐ. 114):

Այս կտորը ուրիշները և վերջերում պ. Աբեղեանը (Արարատ 1899 թ. Մարտ) սխալ են հասկացել և թարգմանել:

Առաջին, ես կարծում եմ որ նախօրինակում երգը (յոգնակի) եղած լինի, որովհետեւ բայը — թուէին — յոգնակի է¹: Երկրորդ, կը պնդեմ, որ այդ նշանակում է քանքն երգ. և այս քերականական այն կանոնն է (փոխադրութիւն), որ երբեմն վսեմ շարադրութեան մէջ յատկացուցիչը և յատկացեալը (ինչպէս և յարաբերական որը և յարաբերեալը) փոխանակում են միմեանց, այսինքն սեռական հոլով յատկացուցիչը դրւում է այն հոլովով, որով պէտք է դրուէր յատկացեալը, իսկ յատկացեալը՝ այն հոլովով, որով պէտք է դրուէր յատկացուցիչը: Օրինակ. —

«Ի դրանց մարդկանց նենգեալ՝ սատակեցաւ» (Գ. զԻԲԵ, ԾԶ. ԵՐ. 377). փոխանակ՝ Ի դրանց մարդկանց: — «կարի անյարմար թուէին նմա երգ

1. Միայն մի ձեռագիրն, № 1669, ունի «երգը բանիցն»:

բանիցն»։ փոխ. բանք երգոյն, կամ, երգոցն։— «հատաւ օգնականութիւն յուսոյ նոցա ի մարդկանէ» (Նղիշէ)։ փոխ. յոյս օգնականութեան։— «Ողջոյն տուք որոց ընդ ձեզ են պաշտօնեայք Բրիտտոսի» փոխ. պաշտօնեից՝ որք ընդ ձեզ են։

Իսկ «Թուէին» (Թուի, Թուի Թէ) նշանակում է երեւում էին։

ԻԳ.

«Գտանի որ ինչ առ սոցա (Անանուն և Սանատրուկ) ժամանակաւ՝ յառաջագոյն գրեալ յայլոց, զգալուստ Առաքելոյն ի Հայս, և հաւատալ Սանատրուկոյ և Թողուլ զհաւատն յերկիւղէ նախարարացն Հայոց, և կատարումն Առաքելոյն և որք ընդ նմա՝ ի գաւառին Շաւարշան՝ որ այժմ կոչի Աբտաղ, և պատառումն քարին և յիրար գալ և ընդունել զմարմին Առաքելոյն, եւ առնուլ անսի աւակերսացն եւ քաղել ի դաւթին. և մարտիրոսանալ Թագաւորի դստերն Սանդիստոյ հուսլ ի ճանապարհն. եւ ասս ուրեմն յայցնել նշխարաց երկոցունց եւ փոխել յառապարհն։ Այս ամենայն, որպէս ասացաք, այլոց պատմեալ յառաջագոյն քան զմեզ, ոչինչ կարեւորագոյն համարեցաք ոճով երկրորդել» (Բ. ԳԵՐԷ, ԼԴ. եր. 164)։

Ուրեմն, ինչպէս տեսնում ենք ահայ «յայտնել նշխարաց երկոցունց եւ փոխել յառապարհն» այլ և միւսները, Խորենացուց «յառաջագոյն» գրողները պատմած է, ինքը

կարեւոր չի համարում անգամ «ոճով երկրորդել» և քանի որ առապար յատուկ անուն չէ, նշանակում է խորդ ու բորդ քարքարուտ տեղ՝ որ ամեն տեղ կարող է գտնուել¹, բնաւ տեղիք չկար կարծելու («Հանդէս ամսօրեայ» 1893. Հ. Յ. Տաշեան) Թէ Խորենացու այդ «յառապարհն» լինէր Վաղարշապատի առապարի ս. Գրիգորի եկեղեցին, և հետեւէր ոչ առաջ քան Է. դարու գրուած լինել . . .

Խորենացու պատմութիւնից տեսնում ենք որ ս. Թադէոս Առաքելոյ նշխարները պատառուող և ընդունող քարիցը (ձորակի կողին) առել են նորա աշակերտները. «առնուլ անտի (քարիցը) աշակերտացն և Թաղել ի դաշտին» և Թաղել են դաշտումը անյայտ կերպով՝ հալածանքի պատճառաւ։ Ուր յանդէտս, բայց Աստուծոյ նախատես տնօրէնութեամբ, զիշերել է վրանի տակ Անակը և ուր տեղի է ունեցել ս. Գրիգոր Հոսաւորչի յղութիւնը (ը. գիրք, ՀԴ. եր. 230)։ Շատ յետոյ յայտնուել են այս տեղ նշխարները—«ուր յայտնեցան նշխարք սրբոյ և մեծի առաքելոյն Թադէի» (նոյն գլուխ)։

1. «Թափառեալ շրջէր եւ առապարաց . . . (ը. գիրք, ԻԲ. եր. 140)։—«եւ անտի մերժեալ զՕշական առապարաւ» (գ. գիրք, Թ. եր. 239)։

Այն տեղ—գիւղի մօտ կայ հնուց փոքրիկ մի մատուռ, և աւանդութիւնն էլ վկայում է՝ որ նշխարքները առաջ այդ տեղ են եղել և յետոյ այդ տեղից փոխադրել են այժմեան վանքի տեղը¹ :

Ահա այս վերջին տեղին (վանքի) է՝ որ Մորենացին կամ «յառաջագոյն» զրոյներից մին կոչել են առապար: Իսկ Վաղարշապատի առապարի ս. Գրիգորի եկեղեցին նշխարաց փոխադրուած լինելու խօսք չկայ բնաւ:

Որ անտարակոյս Վաղարշապատի առապարը չէ՝ այդ մասին այնքան:

Սակայն պէտք է այս տեղ նկատեմ որ. ա) Կիրակոս կրօնաւորի տեսիլքով նշխարաց գիւտը դաշտիցը—երկրորդ տեղիցը պէտք է որ եղած լինի, և ոչ թէ քարիցը՝ ինչպէս սխալ պատմում են վարք սրբոցը և ընդ որ Յայսմաւուրքները. կարգացէք և միտ դրէք Մորենացու խօսքերին: Բ) «Եւ աստ ուրեմն յայտնել նշխարաց երկոցունց եւ փոխել յառապարն» Մորենացուց յետոյ յաւելացրած պիտի լինեն՝ իբրեւ նշխարաց լեզենդայի շա-

1. «Մինչեւ ցարդ կան նշխարք սրբոյն Թադէոսի եւ Սանդխտոյ կուսին յԱրտազ գաւառի յաւանն Մակրայ մօտ ի Մակու, հանգուցեալ ընդ խորանաւ վանաց Թադէոսի առաքելոյն» (Լիակատար վարք սրբոց, Դ. հատոր՝ եր. 62, վեհնետիկ):

րունակութեան ծանօթութեան ի լրացումն: Ասածիս առաջին աշխարայ ապացոյց՝ որ այդ յաւելուածը մի կոպիտ կրկնութիւն է, քանի որ «Եւ առնուլ անտի (քարիցը) աշակերտացն եւ թաղել ի դաշտին» արդէն վաղուց ասել վերջացրել էր Մորենացին, մինչ՝ Կիրակոսի տեսիլքով նորից իբր թէ քարիցը առնում են ս. Թադէոս առաքելոյ նշխարքները, որի համար և յաւելացրել են ի հարկէ «Եւ աստ ուրեմն յայտնել նշխարաց երկոցունց և փոխել յառապարն»:

Բացի այդ. թէպէտ Վարք սրբոցը և տպագիր (Կ. Պօլիս. 1834 թ.) Յայսմաւուրքը Կիրակոսի տեսիլքով նշխարաց գիւտը դնում են, անորոշ կերպով, «յաւուրս ս. Լուսաւորչի» կամ որդուց և թոռանց Լուսաւորչի», որպէս թէ Մորենացուն (իրենց հասկացած) համակերպելով, բայց անշուշտ կնճիւղը լուծել չկարողանալով: Իսկ Սալանթեան աղիւսակը դնում է 532 թուին, և մեր մատենադարանում գտնուած 20 հատ ձեռագիր Յայսմաւուրքները միաբերան վկայում են՝ որ Կիրակոսի տեսիլքով նշխարաց գիւտը եղած է Օհան Օձնեցի (Մանդակունի)² Հայոց կաթողիկոսի և Վահան Մամիկոնեան սպարապետի և մարզպանի օրով՝ 723 թուին:

(Թերևս Վահան Մամիկոնեան՝ մօր կողմից
Կամսարական, Գայլ):

723 Թուից շատ յետոյ («յառաջագոյն
քան զմեզ») Խորենացու Հայոց պատմու-
թիւն. աչքը լոյս Նորայր Ն. Բիւզանդացու:

Այսու ամենայնիւ, Կիրակոսի տեսիլքով
նշխարաց գիւտի և «յառապարհ» փոխադրու-
եցելու ճիշդ ժամանակն ո՛րն էլ որ լինի,
միայն թէ ոչ քարիցը, որ տեսիլքը ճոխացը-
նելու գիտաւորութեամբ իւրացրել են, այլ
Խորենացու գրած զաշտիցն է, այլ և հա-
ւանականն է՝ թէ Խորենացուց յետոյ:

1. Այսպիսի յաւելումներ եմ կարծում խորենա-
ցու մէջ. — «ուր յայտնեցան նշխարք սրբոյ եւ մեծի ա-
ռաքելոյն Թադէոսի»: — «որ ասի բլուր»: — «լայքա շատ
եւ ոսկի բազում տուեալ»: բացատրութիւնը. — «եւ ի
գնալն Տրդատայ ի հռովմ առ սուրբն Կոստանդիանոս»: —
մի քանի «ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս»: — «ի դաշ-
տին որ կոչի Երեւել»:

Ինչպէս յաւելումներ նոյնպէս եւ բարբարոս յա-
պաւումներ ունեցել է խեղճ խորենացու Հայոց պատ-
մութիւնը — բացառապէս քրիստոնէութեան ժամանակի.
որպիսի եւ բաց մնաց (Պօլսեցիք ասում են «վրան բաց»)
մի շատ մեծ խրամատ ցոյց կը տամ քիչ յետոյ ԼԳ. հատ-
ուածում: Երեւի հիները այսպիսի ամօնդ սովորութիւններ
ունէին: Այս օրերում հասարակ դէպքով նկատեցինք դա-
շանց անռաւեալ թղթում. «եւ զմենամարտիլն իւր ընդ-
Գօթացւոյն Գեղուհոնի ընդ ճոպանաձիգ շորացւոյն».
մինչ՝ այդ պատերազմը տեղի է ունեցել Տրդատի Հռովմ-
մէջ Գոհի վերադառնալուց յետոյ: Պէտք է յաւելացնեմ՝

ԻԴ.

«Իսկ Արտաշիսի հասեալ Երուանդայ, ընդ
չրջապատեալ առաքաստն ի կաշոյ և ի կտաւէ պա-
րըսպին էջ, և ի խորանս նորա բնակեցաւ զայն
գիշեր» (Բ. գիրք, ԽԶ. եր. 182):

Մարգիս արքեպիսկոպոսի գրչագիրն ունի
հետեւեալ ընթերցուածը.

«Իսկ Արտաշիսի հասեալ ի Երուանդայ չրջա-
պատեալ առաքաստն ի կաշեա և ի կտաւեայ պա-
րըսպին էջ և ի խորանս նորա բնակեցաւ զայն
գիշեր»:

Այս ձեռագրի ընթերցուածը լաւագոյնն
է. հասկացուիլը դիւրացնելու համար միայն
պէտք է «պարսպին» բառի վերայ յաւելա-
ցնել բութ կէտ. սակայն ընտրելի է տպագրի
«ի կաշույ եւ ի կտաւէ» ընթերցուածը:

Թարգմանեմ. «Իսկ Արտաշէսը հասնե-
լով Երուանդի (ից) կաշեայ և կտաւեայ պա-
րըսպի մէջ (պարսպով) չրջապատած առա-
քաստը՝ իջաւ և այն գիշերը բնակուեց նորա
վրաններում»:

որ ս. Էջմիածնի մատենադարանի № 1661 ձեռագիրը
(Ագաթանգեղոս) լռելի այդ յաւելումը: Փակագծում
ասեմ՝ որ հաւանական է դաշանց բռնող եղած լինելը,
ի հարկէ ոչ այնպէս՝ որ մեզ է հասել. առանց սակայն
Տրդատի եւ ս. Լուսաւորչի Հռովմ առ Կոստանդիանոս
գնալու, Ագաթանգեղոսից («առաքելուհի»), խորենացուց
եւ Եղիշէից մնացած խօսքերը համոզիչ փաստեր են:

ԻԵ.

«Ջայս տեղի առասպելաբանելով վիպասանքն յերգելն իւրեանց ասեն. Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեաւն գեղեցիկ, և հանեալ զոսկէօղ շիկափով պարանն, և անցեալ որպէս վարժուի սրաթեւ ընդ գետն, և ձգեալ զոսկէօղ շիկափով պարանն՝ ընկեց ի մէջք օրիորդին Ալանաց, և շատ ցաւեցոյց զմէջք փափով օրիորդին, հասուցանելով ի բանակն իւր: Որ և ճշմարտութեամբ ունի այսպէս: Քանզի պատուեալ է առ Ալանս մորթ կարմիր, լայնա շաւ եւ ոսկի բազում տուեալ ի վարձանս, առնու զտիկին օրիորդն Սաթենիկ: Այս է ոսկեօղ շիկափով պարանն» (Բ. գիրք, Ծ. եր. 190):

Սխալ է այդ բացատրութիւնը, թէ՛ Խորենացու հարազատ լինէր թէ՛ յետոյ մտած:

Հնումը ձիու վերայ կռուողների զինուորական պարագաներից մին պիտի եղած լինէր և՛ օղով պարանը՝ պարանի նետադեպն (ջիլերից պատրաստուած) գերադասելի էր անշուշտ, իբրեւ բարակ և ամուր և առաջգական: Այդպիսի պարանի գործածութիւն տեսնում ենք Խորենացու մէջ այլ տեղում ևս:

«տեսեալ թագաւորին Բասլաց, մօտ հասանէ յարքայն (Տրդատ). և հանեալ յասպազինէն (ձիու վերայի զինապահարանից) զներդեայ քեմխոտապատ պարանն, և կորովութեամբ ձգեալ յետուստ կողմանէ, ճարպ դիպեցուցանէ (բռնացրեց, ձգեց) յուս

ձախակողմանն և յանութ աջակողմանն. զի էր վերացուցեալ (Տրդատ) զձեռն ածել ումեք սուսերաւ» (Բ. գիրք, ՁԵ. եր. 251—252):

Ընթերցողը տեսնում է որ երկու հատուածի մէջ ևս նոյն տեսակ պարանի մասին է խօսքը, և երկու հատուածում ևս գրուած է «հանեալ» (յասպազինէն): Ուրեմն, հարանախօսութիւնը վերջանալուց յետոյ, Արտաշէսը գեղեցիկ սեւ ձին հեծած անցնում է գետը, Սաթենիկին նստեցնում է ձիու գաւակին, և «հանեալ զոսկէօղ շիկափով պարանն» ձգում է Ալանաց օրիորդի մէջքը՝ որ մի՛ գուցէ ընկնէր գետը, կրկին անցնում է այս կողմն և մտնում իւր բանակը:

Այս տեղ ոչինչ չկայ առասպել համարուելու, ընդ հակառակն խիստ մի իրական նկարագիր ենք գտնում, և ոչ մի կտոր այլաբանութիւն գոնէ: Մինչև անգամ եթէ վիպասան երգիչը այս պատկերը բանաստեղծած լինէր, կամենալով «զարգարել զանգարդսն», այնու ամենայնիւ ոչինչ չկայ անբնական կամ բացատրութեան կարօտ: Ինչ է, Խորենացին շռայլութիւն է համարում և չի հաւատում որ Արտաշէսի պարանը շէկ փոկից, իսկ օղը ոսկուց կարող էին լինել, որ ահա պէտք է համարում «ի վարձանս» տուած

ոսկով և լայքայով (կասկածելի բառ) անհիմն
մի բացատրութիւն յարել:

Այդ աւելորդ և միանգամայն անմիտ
բացատրութիւնը անշուշտ յետոյ մտած պի-
տի լինի Խորենացու բնագրի մէջ այնպէս՝
ինչպէս գրուածիս Դ. հատուածում տեսանք
«զայր առ քէ» — ի համար մի գրչագրի լու-
սանցում յետոյ յաւելացրած անմիտ բացա-
տրութիւնը¹:

1. 96 թուի Յունիս ամսում պ. Ս. Մալխասեանի
մի յօդուածից (Մշակ) իմացայ, որ պրօֆ. Գ. Խալա-
թեանցը իւր մի նոր գրուածքով աշխատել է ցոյց տալ՝
թէ Խորենացին Արտաշէսի եւ Սաթենիկի վէպը վերցրել է
ս. գրքի Եսթերի պատմութիւնից՝ նմանողութեամբ: Հէնց
այդ օրերում ինքը պ. Խալաթեանցը եկաւ ս. Էջմիածին,
ես զնացի հիւրատուն նորա մօտ, ծոցիցս հանցի մի
կտոր թուղթ եւ կարդացի. —

ա) Եթէ Խորենացին կեղծելու լինէր, ամենից առաջ
Արտաշէս եւ Սաթենիկ (Ասթինէ) անունները, — միակ նմա-
նողութեամբ, փոխած կըլինէր:

բ) Արքաներից մին մեղկութիւն է ներկայացնում
իսկ միւսը՝ ասպետական քաջութիւն:

գ) Ասթինէ հարեմական նամակաւոր պաշտող կին է,
որի համար եւ ընկաւ տիկնանց տիկնոջութիւնից, իսկ Սա-
թենիկ՝ չքաշուող, բնութեան որդի:

դ) Եսթեր հրէայ որք գերի աղջիկ էր, Սաթենիկ՝
արքայադուստր:

ե) Մին կրաւորաբար եւ բարձր որոնելու համար գը-
նում է կանանոց, միւսը՝ անձնօրհրդեամբ փրկանք է գը-
նում եղբօր սիրոյ:

զ) Մի տեղ պալատական ճոխութիւն, հարսանե-
կան 180 օրեայ կեր ու խում, արքեանալ, զեղխ բար-

ԻԶ.

«Գեղմանց լեառն» (Բ. դերք, ԾԳ. եր. 194):

Քերովքէ Պատկանեան սրբագրել է այդ
և կարդում են «Գիլան (ու) լեառն»:

Սարգիս արքեպիսկոպոսի գրչագրին ու-
նի «Գիլմանց լեառն» ընթերցուածը: Այլ և

քեր, միւսում՝ փեսայութեան եւ հարսնութեան առա-
գաստի աւուր ազգային մի սարդ սովորութիւն՝ արքա-
յավայել փարթամութեամբ. «տեղ ոսկի տեղայր ի փե-
սայութեան Արտաշէսի, տեղայր մարգարիտ ի հարսնու-
թեան Սաթինկանն»:

ե) Մի տեղ նենգութիւն, քսութիւն (Համանի), որ
հանդիպում է Եսթերի ատելութեան, ուր սիրահարոշ-
բեան խօսք լինել չի կարող, միւսում՝ քաջութիւն (Արգա-
մի), որ տրփանք է բերում Սաթինկայ...

ը) Մին իւր ազգի փրկութիւնը խնդրելու (Մուրդ-
քէի թելադրութեամբ) ներկայանում է հազար ու մի
խորամանկութեամբ եւ երկիւղով, միւսը՝ համարձակ եւ
խիզախ:

բ) Այս բոլորից յետոյ, Խորենացու մէջբերած եր-
գերը եւ առասպելները Արտաշէսի, Սաթինկայ եւ Ար-
տաւազդի մասին՝ հնութեան եւ պարզութեան հետ հա-
ւատարմութիւն են ներշնչում...

Յարգելի Պրօֆեսսօրը նշանակութեամբ յտուեց այս
առարկութիւններին, Ես յաւելացրի. Խորենացուն փոխա-
րինող ուրիշ պատմութիւն չունինք գոնէ, ցանկալի էր
որ մերոնք ձեռնհաս մարդիկդ գեռ աշխատէիք ի նպաստ
Խորենացու:

— Հմյր սուրբ, մի վախճ, խորեանցիկ այն պտուղը
չէ՞ որ այսպէս նկարագրեամբ տապալուէ:

Թիշուր էք...

յայտնի դաշանց թղթի մէջ գտնուում ենք.
«խառնիճաղանճ բազմութիւնքդ առհասարակ
որ ի Սաքաստան և ի Դելմաստան»։ Իսկ
Թովմ. Արծրունու պատմ. չորրորդ դպր.
Ժ. գլխում երեք անգամ պատահում է
«Դելմացն» բառը, և Վարդան Բարձրբերդ-
ցու պատմութեան մէջ (եր. 128) կարդում
ենք. «տէրն Ռէոյ Մաջադաւայ Ռքստոմ
երեք աւուրք յառաջ առեալ զԴելմին...»։

Ուրեմն, եթէ ընթերցուածներէց դա-
տելու լինենք, անշուշտ ընտրելի պիտի հա-
մարուի «Դիլմանց» կամ «Դեղմանց լեռն».
այսօր ևս «Դիլման» շհար (թերևս և լեռ-
ներ և գաւառ) կայ Պարսկաստանում։

Ձեռագիրներում գ և դ հասարակ տա-
ռերով են գրուած և որոնք հեշտութեամբ
կարող էին շփոթուած լինել։

ԻԷ.

«սլարգիէ նմա Արտաշէս գմասն արքունի, որ
ի չէնս Գողթան, և գնուցու ախունս» (բ. գիրք,
ԾԳ. եր. 195)։

Խորենացու աշխարհաբառ թարգմանու-
թեան մէջ, ծան. 411. կարդում ենք. «Ուղ-
տու ախունք փոքրիկ գիւղ է Վասպուրական

նի Գողթն գաւառում. (ինձիճ. Հին. Հայ.
եր. 214)»։

Այդ անունով գիւղ չի ստուգւում։

«Ուղտու ախունք» թրքերէն թարգման-
ւում է—Դէվէգեօզ. արդեօք Հայաստանի
աշխարհագրութեան մէջ պատահած՝ Գար-
ւոյ լեռնաշղթայի մէջ գտնուող Դէվէգեօզ
լեռը չէ՞, որ Խորենացու ժամանակ կոչուե-
լուս է եղել Ուղտու ախունք.—անտարակոյս։

ԻԸ.

«Որ յետ սակաւ ինչ աւուրց թագաւորելոյն
Լուրոյ, անցեալ զկամեջաւն Արտաշատ քաղաքի՝ որ-
սալ կինճս և իշավայրիս զակամբք Գինայ, աղմկեալ
իմն ի ցնորից խերադարանաց, ընդ վայր յածելով
երկվարան, անկանի ի խոր իմն մեծ, և խորասոյգ
լեալ՝ անհետի» (բ. գիրք, ԿԱ. եր. 206)։

Ընթերցողը տեսնում է որ այս տեղ
չհասկանալու բան չկայ՝ այո՛, սակայն մաս-
նաւոր մի կարճ պատմութիւն ունի այս և
որ պէտք եմ համարում այս տեղ դնել՝ որ-
պէս զի ապագայում եւս սխալուողներ չլի-
նին. ապա կասեմ իմ կարծիքը։

91 թուին էր. պատահում եմ «Միաբա-
նին» (Գ. Տ. Մկրտչեան), նա հարցնում է. Խո-
րենացու Հայոց պատմութիւնը կարդացել էք։

—Այո՛:

Շահա՛:

—Մի քանի անգամ՝

Արտաշէսի որդի Արտաւազդը ի՞նչպէս
կամ ո՞ւր կորաւ:

Պատմեցի. յաւելացրի և՛ Գողթան եր-
գիչներին այլ և պառաւներին առասպելները:

Այդ սխալ է, ասաց, ես գտել եմ նոյն
իսկ Խորենացու խօսքերով՝ թէ ո՞ւր է խորա-
սուզուել Արտաւազդը:

—Այդ հօ շատ լաւ բան կը լինէր. կը
հանէինք և խեղճ շներն էլ հանգիստ կառ-
նէին . . .

Նա վերցրեց Խորենացին, կարդաց ճիշդ
այդ վերի հատուածը, թարգմանեց էլ և յա-
ւելացրեց. «ահա՛, Արտաւազդը կամուրջից
անցնելու ծին խրտնել է եւ ընկել են Նրաս-
խի մէջ եւ խորասուզուել» . . .

—Այդպէս հասկացուելու համար, այն
էլ «Խորենացու խօսքերով», պէտք է որ լի-
նէր ընդ անցանելն, — յանցանելն, կամ մի
այլ դարձուածով. սակայն, նկատեցի, որով-
հետեւ այդ տեղ «անցեալ զկամրջաւն» անցեալ
դերբայով է, ուստի դուք էլ կամուրջը դեռ
զահմաթ քաշէք անցէք, նորանից դենը որ-
քան կամենաք փնտրէք Արտաւազդին . . .

Եթէ Միաբանը միայն լինէր Խորենա-
ցու խօսքերից մոլորուող սխալուողը, ան-
շուշտ զանց կանէի մեր այդ խօսակցութիւ-
նը, սակայն հիմք կայ երկիւղի թէ գուցէ
շատերը նոյնպէս սխալ հասկանան. որովհետեւ
(կարող է այժմ «Միաբանը» մտիթարուել),
պատմիչ Վարդան վ. Բարձրբերդցին ևս այդ-
պէս սխալ է հասկացել. «ի յորս զետամոյն
լինի առ կամրջոյն Մեծամօրի՝ զկեալ յայ-
տոց» (եր. 51):

Յոյս ունիմ որ այսուհետեւ կամուրջի
վերայ կանգ չեն առնի Արտաւազդի կորու-
տեան տեղը փնտրողները: Իսկ ես յառաջ
բերեմ այժմեան իմ կարծիքը Արտաւազդի
կորստեան մասին, օգտուելով միայն Խորե-
նացու խօսքերից. —

ա) Արտաւազդը տակաւին մանկութիւ-
նից այնպիսի անհանգիստ և կատաղի մի անձ-
նաւորութիւն էր համարուած, որ նորա մա-
սին արդէն ընդհանուր կարծիք էին կազմել
թէ՛ «վիշապազունք գողացան զմանուկն Արտա-
ւազդ, և դեւ փոխանակ եղին»:

բ) Արտաշէսի դայեակը, թագաւորեցնողը,
միանգամայն անձնուէր բարեկամ և բարե-
րարը — Սմբատ Ասպետը «թողու զիշխանութիւն
գօրացն Հայոց, ընդ որ խանդայր Արտաւազդ . . .
կամեր սպանանել զՍմբատ»:

զ) Արտաշէսի միւս բարերար Արգամից խնեց Արտաւազդ երկրորդութեան պատիւը.—

« Բնապուրեաց զհայր իւր ցասնուլ Արգամայ ... այսպէս ընկեցեալ զնա ի պատուոյն, ինքն առնուլ գերկրորդութիւնն . . . քարչին զալիսն Արգամայ . . . զբազումս յազգէն Մուրացան սպանանել հրամայեաց, և զապարանսն Արգամայ այլել. և զհարձ նորին . . . ածել ի հարձութիւն Արտաշիսի . . . յաւելլու (Արտաւազդ) ևս հանել զՆախճաւան . . . և զամենայն գեւղս, յորում և ապարանս և բերդս ի նոցանէ շինէ իւր ի ժառանգութիւն»։—

Արգամի որդին փորձում է ընդդիմանալ, բայց

« յաղթեալ արքայորդւոյն՝ սատակէ զամենայն ծնունդս Արգամայ հանդերձ հարբն, և որք միանգամ երեւելիք յազգէ Մուրացան. զբաւէ յինքն զչէնս և զամենայն իշխանութիւնս նոցա : . . . աննշանաւորք ոմանք և կրտսերք փախուցեալ առ Արտաշէս ապրեցան ի դրանն արեւոյն»։

դ) Եղբայրները նորան ատում և թըշնամի էին. « Նախանձ բերելով ընդ նմա եղբարցն՝ ի զրգուլթենէ կանանց իւրեանց »։— Մաթանը Տրոյիանոս կայսեր խորհուրդ տուեց « եթէ զԱրտաւազդ և զՏիրան վտարանդիս ոչ արասցես . . . »։— Արտաւազդը և Տիրանը « դարան գործեալ յորս սպանին զՄաթան »։— Արտաւազդը թագաւորելով՝ անմիջապէս « Խալածէ յԱյրարատոյ զամենայն եղբարս իւր . . . : Որ

յետ սակաւ ինչ աւուրց թագաւորելոյն իւրոյ, անցեալ զկամրջաւն . . . անհետի » . . .

Արտաւազդը որդի չունէր, բարեկամ ևս չէր կարող ունենալ, իսկ թշնամի՝ « ի դրանն արքունի » և դրսից—որքան կամենաք . . . Որսի տեղերում թագաւորին դաւ գործել սպանելը ամենադիւրին բանն էր այն ժամանակներում. մնում էր ոճիրը պատրուակել՝ զգուշանալով զօրքի կամ ժողովրդի խռովութիւնից, ինչպէս վարուեց Շամիրամը՝ որ իւր յարալէզներով կենդանացրեց Արային . . . Ազատ Մասիսը չէ՞ որ բնակավայր էր քաջքերի, մնում էր համբաւել յայտնի առասպելները, որ քաջքերից զարհուրած—նախապաշարուած ժողովուրդը իրենց թագաւորի դիակը փընտրելու ևս չհամարձակէր. ժողովուրդ, որ թագաւորի մահուան ժամանակ շատերը կամաւոր մահ էին ընդունում « Ըստ օրինի հեթանոսաց » . . .

Բժիշկ Լեոն Տիգրանեանցի պատմած (Մշակ 1881 թ.) այն երեք հատ գերեզմանաքարերը՝ որ գտնուում են փոքր Մասիսի գագաթին, ո՞վ գիտէ թէ քաջքերը դրած չլինեն կորած Արտաւազդի և նորա մի-երկու հաւատարիմ հետևորդների վերայ¹ . . .

1. Մանկութեանս օրերում հեքիաթներում այնքան

ԻԹ.

«գյառաջագունից ասացելոց մօտաւորաց Վնե-
նից և զարմից Հայկազանց» (բ. գիրք: ԿԴ. եր.
213):

Այս կտորը մինչև ցայսօր անհասկանալի
է Խորենացու Թարգմանող և ուսումնասի-
րողներին, որով և ամբողջ հատուածը մոլոր-
է մնացել¹: Դսկական պատճառը Խորենացու
գրիչը չէ՝ քան լիցի այլ պակասում է լաւ
ուշադրութիւն և յիշողութիւն:

Խորենացին գրել է.

«Երթեալ բնակէ (Հայկ) ի լեռնոտին միում ի
դաշտաւայրի, յորում սակաւք ի մարդկանէ յառա-
ջագոյն ցրուելոցն դադարեալ բնակէին. զորս հնա-
զանդ իւր արարեալ Հայկ, չինէ անդ...» (ա. գիրք,
Ժ. եր. 33):—«Յիշի և աստանօր պատմութիւնս.
հարաւոյ կողմանէ դաշտիս այսորիկ առ երկայնա-
նըստիւ միով լեռամբ բնակեալ յառաջագոյն արք

յաճախ լսուած դեւերի մասին հետաքրքրութիւններն
բաւականութիւն տալու համար հանգուցեալ Մայրս պատ-
մել է հետեւեալ հին զրոյցը. — «Ասում են թէ Նոյ նա-
հապտի որդիներից մէկի կենը երեխայ ծնեց տապանում.
նորա ութ հոգի էին՝ երբ մոտն տապանի մէջ. բայց
դուրս գալուս դարձել էին ինն. Աստուած այն նորածինն
ոչ—բարեպաշտական զաւակ համարելով՝ անիծեց եւ
գարժրեց դեռ, որ աճեց եւ բազմացան Մասիսի վերայ».

2. Գեր. Խորեն. եպիսկոպոս Ստեփանէն (էջ—ձ)
է թէ «այս շատ դժուարիմաստ հատուածը» (էջ—ձ)
աւրդէն ինքը հասկացել է եւ ուղիղ Թարգմանել...

սակաւք՝ ինքնակամ հնազանդեալ դիւցազինն» (նոյն
երես):—«Ի հօրով տեղիս գտան բնակեալ ի մարդ-
կանէ յերկրիս մերում ցան և ցիր սակաւք յառաջ
քան զգալուստ բնկին մերոյ նախնւոյն Հայկայ»
(ա. գիրք, ԺԲ. եր. 40):—«Մոռացաք և զգժնեայ
Սլաքն անուանեալ այլ. զոր ոչ կարեմ հաւաստեալ
ասել, ի Հայկայ եթէ յառաջագունից քան զնա եղե-
լոց յաշխարհին, զոր հին զրոյցքն պատմեն լինել»
(բ. գիրք, Ը. եր. 115):

Արդ, այսպէս «յառաջագոյն», «յառաջ»
«յառաջագունից» բառերը հինգ տեղ իմ
ընդգծելուց յետոյ, ապա կարդացէք կամ
Թարգմանէք Խորենացու գրածը, տեսէք ան-
հասկանալի բան կայ: Դսկ «Վճննից» յատուկ
անունը անբացատրելի մնալով հանդերձ չի
արգելում հատուածը ուղիղ հասկանալ:

Թէ մեր և թէ օտարազգի մատենա-
գրութեանց մէջ ոչ մի բառ, ոչ մի խօսք
չկայ՝ որ յիշեցնէր Խորենացու այս «Վճննից»
բառը: Ամենքը, գիտուն, անգէտ, հասնելով
սորան՝ ուսնեք Թափ են տալիս և անցնում:
Բայց ահա՛ յառաջ, յառաջագոյն և յառա-
ջագունից բառերը իմ հէնց նոր ընդգծելով
ոչ միայն հասկանալի դարձրի հատուածը,
այլ և պիտի փորձեմ ահա բացատրել «Վճն-
նից» բառի ծագումը և նշանակութիւնը:—

«Վճննից» (Վճնանք) բառը պէտք է որ

ծագած լինի վէճ բառից, և սկզբնականը եղած լինէր վէճեանք—վիճեանք, կրճատը՝ վճեանք,—վիճողներ, անբաւականներ: Որովհետեւ, ինչպէս արդէն ցոյց տուի, վճեանք յառաջ քան Հայկայ ժամանելը մեր երկրի բնիկներն էին, և որոնք ի հարկէ բնական է որ իրաւամբ կը վիճէին Հայկայ և Հայկեանց տիրանալու դէմ, որի համար և վճեանք անունը ստացած պիտի լինեն: «Հնազանդ իւր արարեալ» խօսքիցն ևս հետեւում է իմ այս բացատրութեան հնարաւորութիւնը:

Բացի այս, պէտք է ինկատի ունենալ և այն՝ որ (ըստ Յովհաննէս կաթողիկոսի պատմութեան) Հայկայ սերունդից իշխողների շարը ընդհատուել է Անուշաւանից մինչ Պարոյրը. հաւանական է թէ «յառաջագոնից ասացելոց» մարդիկ իշխանութեան մասին վէճ յարուցանելով յաջողած լինեն առ ժամանակ կորզել և իշխել, որպիսի պատճառաւ և ժառանգած «վճեանք» անունը:

Յով. կաթողիկոսի խօսքին ոյժ են տալիս Խորենացու երկու հատուածները.

«Եւ այժմ ահա զուարճացայց՝ ոչ փոքր ինչ կրելով խնդութիւն, հասանելով ի տեղիս մերում իսկ բնկի նախնւոյն (Հայկ), յորում սերունդք թագաւորութեան հասանեն յաստիճան» (ա. գիրք, ԻԱ. եր. 68):—Արդ այժմ անցից ի թիւ մերոց արանց,

մանաւանդ քաղաւորաց, մինչև ցտէրութիւնն Պարթևաց: Քանզի ինչ այսոքիկ արք (, որ) ի մերոյ քաղաւորեն (') սիրելիք (են), որպէս բնիկի եւ իմոյ արեան առու, եւ հաւաստի հարազատ» (ա. գիրք, ԻԲ. եր. 70): 4

Լ.

«մարիսկեան բժիշկքն» (բ. գիրք, ԶԳ. եր. 247):

Տիգրան Բ.-ի օրով, Ռըշտունեաց նահապետ Բարզափրանը պարսիկ և հայ զօրքերով յարձակուեց Նրուսադէմի վերայ, Հիւրկանոսի մեծ հարստութիւնը գրաւեց և նորան գերեց, նորա գաւառները ասպատակեց աւերեց, և «զմարիսացւոց քաղաքն գերի առեալ... զգերին Հրէից՝ որ ի մարիսացւոց» (բ. գիրք, ԺԹ. եր. 137):

Ուրեմն, կարծում եմ, «մարիսկեան բժիշկքն» Հրէից Մարիսա (արդեօք Սամարիա) քաղաքի անունով էին կոչուում: Երևի թէ այդ քաղաքացի բժիշկներ հռչակուած էին:

1. Փակագծերով իմ յաւելացրած երկու բառից եւ երկու կէտից հասկանում է ընթերցողը թէ ես ինչպէս տարբեր եմ հասկանում վերջին հատուածի միտքը:

ԼԱ.

«Եւ ոչ այնչափ ինչ շութափեաց մտրակել զերիւլարն (Բասլաց թագաւորը), քան թէ անեակ ձեռամբն ի ներդեայն աճապարեալ սկային (Տրդատ), և սաստկութեամբ ուժոյն զիւրեաւ ցանցեալ» (Բ. գիրք, ԶԵ. եր. 252):

Ամենից յաջողակ և ուղիղ ընթերցողաճն է այս. սակայն «ցանցեալ» բառն է միայն, որ և իմ տեսած 12 օրինակ ձեռագիրներում ևս գտնւում է, և որ հատուածի իմաստը փշացնում եւ անբացատրելի է դարձնում: Այդ «ցանցեալ» բառի տեղ պէտք է որ, կարծում եմ, անշուշտ եղած լինէր քանցեալ (քաշել—պոկել հանել, խլել) ուղիղ ընթերցուածը:

Այդ երկու բառերի գրութեան ձևերի տարբերութիւնն էլ խիստ չնչին է, որով և հեշտութեամբ մտել է այդ սխալը:

ԼԲ.

«Բայց Տրդատայ հաստատեալ իւր զեւթնալըքսպեանն Եկբատան երկրորդ, վերակացուս յինքենէ թողեալ դառնայ ի Հայս» (Բ. գիրք, ԶԵ. եր. 259):

Եայտնի է որ Նորայր Ն. Բիւզանդացին վաղուց «գրչի մի ջարժումով» սրբագրել է այդ

հատուածը՝ «երկրորդ» բառից յետոյ եղած ստորակէտը տանելով նորանից առաջ: Աւելորդ է ասել՝ որ այդ սրբագրութեամբ պէտք է հասկանալ Մարաստանի հին մայրաքաղաքը, ուրեմն և կարճւում է էլ ուրիշ Եկբատան ենթադրելը, մինչ՝ Խորենացու աշխարհաբառութարգմանողն էլ կարելի է համարում եզրակացնել «քանիմի Եկբատաններ լինել Մարաստանում» . . .

Իմ խուզած 12 հատ ձեռագիրներից չորսը (№, №. 1662, 1667, 1663, 615) ունին «Եկբատան» բառից յետոյ կէտ, — առաջին երկուքը՝ միջակէտ, երրորդը՝ բութ կէտ, չորրորդը՝ ստորակէտ, ճիշդ յիշեալ սրբագրութեան նման: Միւս կողմից, Չամչեան Հայոց պատմութեան մէջ կարդում ենք՝ որ Ատրպատականի «եօթնպարսպեան» Դավրէժ քաղաքը «յոմանց կոչեցաւ երկրորդ Եկբատան, և յոմանց՝ գանձակ շահաստան» (ա. հատ. եր. 365 և 415):

Եթէ այսպէս, ուրեմն Ն. Բիւզանդացու այդ սրբագրութիւնը ոչ միայն նոր զիւտ չէ, թէ և անկախ եղած, այլ և սխալագրութիւն պէտք է համարել գոնէ առ այժմ. որովհետեւ երկու Եկբատան լինելը այսպէս ստուգելուցս յետոյ դեռ պէտք է և՛ ստուգել

պատմութիւնից՝ թէ ո՞ր եկեղատանը վերցրեց Տրդատը:

Այն ձեռագիրները, որոնք կէտ դնում են «Եկեղատան» քառից յետոյ՝ կարծում եմ թէ ընդունում են Մարաստանի Եկեղատանը լինել: Այն ձեռագիրները, որոնք կէտ դնում են «երկրորդ» քառից յետոյ՝ ընդունում են Ատրպատականի Դաւրէժ քաղաքը: Իսկ այն ձեռագիրները, որոնք երկու տեղում եւս կէտ չունին՝ տատանուելուս են եղել: Բայց տպագիրներն առհասարակ նմանում են երկրորդ տեսակին. արդեօք հասկանալով պատճառը և համոզուած, թէ լոկ հաւանականութեամբ առաջնորդուելով կամ միմեանց հետեւելով . . .

Ի՞մ կարծիքը, յենուելով Խորենացու խօսքին—«ընդ հիւսիսային կողմանս իշխանութեանն Պարսից դիմեաց (Տրդատ) տառեկան: չուարութեամբ» (նոյն գլ. եր. 257),—Տրդատը վերջրած պիտի լինէր Դաւրէժը, հետեւաբար՝ տպագրի ընթերցուածը ես կարծում եմ ուղիղը:

ԼԳ.

«Ասեն և զայս, եթէ գաղտնի եհան (Կոստանդիանոս) ի Հռովմայ գասացեալն Պաղատիոն

Քերածոյ, և եդ զնա ի Փորոնին ներքոյ սեանն զառ ի յիւրմէ կանգնեալ. բայց այս մեզ անհաւատալի է, այլոց՝ որպէս կամք իցեն» (բ. դիւբ, ԶԼ. եր. 262):

Ի՞նչ էր քերածոյ Պաղատիոնը՝ ես չգիտեմ: Խորենացու պատմութեան աշխարհաբառ թարգմանութեան 563 ծանօթութեան մէջ այսքանն է միայն ասուած. «բիւզանդական աւանդութեամբ հին հռոմայական պալադիումը բերուած էր» . . . : Այս նոյն է՝ ինչ որ Խորենացու ասածը. իսկ տեղեկութիւն կամ բացատրութիւն պալադիումի ինչ լինելու . . .

Գիտեմ որ Palatin կոչում է այն եօթն բլուրներից մին, որոց վերայ տարածւում էր Հռովմը: Արդեօք այդ սրբազան քաղաքը ձեւացնող քանդակը ունէին Հռովմում, որի Կ. Պօլիս գաղտնի փոխադրուած լինելուն Խորենացին չի հաւատում:

Մի այլ ենթադրութիւն ևս կարող եմ անել.—Արարատ ամսագրի 1892 թ. Օգոստ. տետրակում (եր. 749—754) հրատարակուած է Ասողկայ պատմութեան կորած Ե. և Զ. գլուխները: Այդ տեղ կարդում ենք.

«Սա (Կոստ.) յերկրորդում ամի թագաւորութեան իւրոյ փոխեաց զարքունիսն ի Հռովմայ ի Բիւզանդիա կղզի. և պարսպեալ զնա քաղաք մեծ,

անուանեաց յիւր անուն Կոստանդնուպօլիս. և բերեալ ընդ իւր մասն ինչ նշխարաց սրբոյն Պետրոսի եւ Պողոսի առ ի հաստատութիւն թագաւորութեանն »:

Արդե՛ք ս. Պետրոսի և Պողոսի մասանց տուփ՝ պահարան կար Հռովմում Palatin քլորի նմանութեամբ քանդակաշէն (քերածոյ), որ յայտնի էր «Պաղատիոն քերածոյ» անունով, և որ Կոստանդիանոս զաղտնի փոխադրեց ի Բիւզանդիա . . . ¹:

ԼԳ.

«Բայց սրբոյն Գրիգորի դարձեալ ի նոյն լեռինս, ոչ ումեք յետ այնր յաւելոյր երեւել մինչեց վախճան» (Բ. գիրք, Դ. եբ. 266):

Այս փոքրիկ առանձին հատուածի հետ, որով և վերջանում է Դ. գլուխը, ոչ մի կապ չունին ոչ դորա նախընթաց հատուածը, ոչ նոյն Դ. ամբողջ գլուխը, ոչ իսկ Խորենացու պատմութեան բոլոր նախընթաց գլուխները, և ոչ մի բառը գտնէ: Մինչդեռ իմ առաջ բերած այդ հատուածը յարաբերող է, մա-

1. Վերջին սրբագրութիւնն էի անում եւ արդէն մամուլի մէջ էր, պատահեց պ. Յով. Յովհաննիսեանը եւ նկատեց՝ որ Պաղատիոն—Pallatium էր Pallas—Սթենաս գիցուհու արձանը . . .

նաւանդ «դարձեալ ի նոյն լեռինս» բառերը, բայց ո՛ւր է դորա յարաբերեալը. Խորենացին այդքան անգրագէտ . . .

Ոչ ապաքէն այդ հատուածը անտարակուսելի մի խոշոր հետք է՝ որ յիշեցնում է Խորենացուց պակասած մի շարք պատմութիւն հայ ազգի հոգեւոր վերածնութեան, վերածնութիւն՝ որին Խորենացու նման Մեծ հայր իւր պատմութեան ամենազեղուէն էջերը կը նուիրէր: Յունէի և Վրաց դարձի համար Խորենացին իւր պատմութեան մի մեծ գլուխ (ը. գիրք, 22.) է նուիրել, մինչ՝ ս. Գրիգոր Լուսաւորչի հանգէս գալու, Արտաշատի Խորվիրապը ձգուելու և ապա հանուելու, Հռիփսիմեանց և Գայիանեանց նահատակութեանց, Հայ ազգի և թագաւորի դարձի և մկրտութեան, Անահատի մեհեանը կործանելու և նոյն տեղում իւր (Խորենացու) սիրած «Կաթողիկէի» տեղը որոշելու և խաչ կանգնելու, և ինչ, և ինչ, մասին՝ մնում է կարծել թէ պապանձուել էր, ապա թէ ոչ՝ ինչպէս կարող էր լուել:

Երեւի միամիտներ մատնացոյց կանեն ինձ Խորենացու (կասկածելի) խօսքերը. —

«Իսկ զմնացեալս ի գրուցացս ուսուցանէ լեզ Ագաթանգեղոս»:—«Իսկ որ ինչ ի նորա (Գիողի-

դիմանալ) ժամանակն գործք, յայտնեք և՛ Ագարան-
գեղոս:—«որպէս ուսուցանեք և՛ Ագարանգեղոս»:
—«որպէս համառօս ուսուցանեք և՛ Ագարանգեղոս»:
—«որպէս ուսուցանեք և՛ Ագարանգեղոս»
(Բ. ԳԵՐԲ, ՀԳ. ՀԹ. Չ. ՉԳ. ՉԶ.):

—Առաջինը «սքանչելի ծերոյն» զրոյցի
նմանների մասին է ասուած: Երկրորդը՝
Տրդատի այն «նահատակութիւնների» մա-
սին է, որ նախ քան թագաւորելը «յամա
անիշխանութեանն Հայոց» գործել է Դիոկ-
ղեդիանոսի բանակում, և որ յիրաւի Ագա-
թանգեղոսի մէջ եղբ գտնուում, օրինակ.—
բարձրացել է պարսպից և ներս մտել՝ որ ու-
րիշ ոչ ոք չի կարողացել, այն տեղից դուրս է
ձգել բանակի ձիերի համար շատ խոտ «բարդս».
պահապաններին նոյն իսկ և էշերին
խոտի հետ շարտել է դուրս:—Ապա Գոթա-
ցոյ Հռչէ թագաւորին կալուկալ արած
բերել է Դիոկղեդիանոսի առաջ, որով յաղ-
թութեամբ վերջացել է պատերազմը: Ահա
սորանք են «իսկ որ ի նորա ժամանակն գործեք,
յայտնեք և՛ Ագարանգեղոս»: Եւ չէ՞ որ Խորենա-
ցու այդ գլխի վերնագիրն է «Յաղագս նահա-
տակութեանն Տրդատայ յամա անիշխանութեան
Հայոց», մինչ իմ նկատած պակասած պատ-
մութիւնները Տրդատի թագաւորած ժամա-
նակին են պատկանում...

Երրորդը՝ մի սոսկ վկայութիւն է ի հաս-
տատութիւն Արտիթեայ եպիսկոպոսի թղթից
քաղած իւր պատմածների մասին: Իսկ վեր-
ջին երկուքը՝ ի հաստատութիւն Կոստան-
դիանոսի և Նունէի մասին իւր պատմած-
ների՝ ըստ Ագաթանգեղոսի: Այլ ոչ թէ ի Լը-
ռումն ընդհատուած—բաց թողած այնքան
կարեւոր պատմութիւնների: Վերջին երեք
կտորի սկզբում եղած «որպէս» բառերը ևս
չէ՞ որ վկայում—հաստատում են իմ խօս-
քը՝ թողնենք պատմութեան իմաստը:

Եւ յաջորդ ԶԱ. գլխի առաջին հա-
տուածը (13 տող), որ մի ամփոփումն-ծայ-
րաքաղ պատմութիւն (résumé) է պակասած
նախընթաց պատմութիւնների մի մասի, այլ
ևս ոչ մի տարակոյս չեն թողնում՝ որ Խո-
րենացու պատմութիւնը (քրիստոնէութեան
ժամանակի) շոշափած են անհարազատ ձեռ-
քեր: Այդ գլուխը սկսւում է (անանջատ
առաջ բերուած հատուածից)

«Յեւթն և ի տասներորդի ամի թագաւորու-
թեան Տրդատայ զսաբ նսեալ յաթու սրբոյ առա-
քելոյն Թագէոսի զՆախահայրն մեր Գրիգորիոս...
սիրեցեալ զԵրիմս եւ զամայութիւն»...

Բայց երբ կամ ո՞ւր «զտաք նստեալ
յաթու... սիրեցեալ զԵրիմս»... երանելի՛

Խորենացի, մի բառ գտնէ ունի՞ս ասած դո-
րանց մասին . . . մինչ Դու, ուրիշ անգամ
նոյն իսկ միառմի կրկնելով Ագաթանգեղոսի՝
համեմատաբար նուազ կարեւորութիւն ունե-
ցող պատմածները, դարձեալ չես բաւական
նանում այնքանով՝ և գրում ես.

«Արդ թէպէտ և Ագաթանգեղոս այսպէս հա-
մառօտ էանց ընդ այս, բայց ես հաւանեալ եմ
յաւէս ձիգ եւ երկայն առնել զպատմութիւն ժամա-
նակիս այսորիկ նաւելով ի սկզբանէն, եւ նմարիս
ասացուածով՝ հո՞ծ եւ խիս» (Բ. գիրք, Կէ. եր.
218—219):—

Մինչ Դու, ի՞նչ. գլխում պատմածներդ
կրկնելով նոյնութեամբ ի՞նչ. գլխում՝ յաւե-
լացնում ես.

«Բայց մի աստանօր բամբաստեսցես զմեզ իբր
զաւելագործ ոք, որպէս թէ զմի անգամ պատ-
մեալսն դարձեալ ասացաք. այլ զիտեան, զի ախոր-
ժելով վասն ազգականաց մերոյ Լուսաւորչին քա-
ջանմուտ կամեցեալ լինել ընթերցողացն, կրկնա-
գրեցաք երկրորդելով» (եր. 222):

Եւ ահա այս Խորենացին է՝ որ իւր
Հուսաւորչի վառ գործերի և ժամանակի մա-
սին յանկարծ լռած է, հակառակ իւր իսկ
ցանկութեան . . .

Անիծեալ ձեռքեր:

ԼԵ.

«Համապատասխանաբար մերանց Աղուանից»:

Որ Աղուանք Հայ էին և Հայկայ սե-
րունդ՝ տարակոյս չի թողնում Խորենացին:
Ուտին նոյնպէս Հայ երկիր էր՝ Աղուանքից
դուրս: Աղուանք այժմ խառն են փոքր Սիւ-
նիքի—Արցախի հետ, որ միասին կոչւում են
Ղարաբաղ: Բայց զիտե՞ք թէ Խորենացին դոցա
համար ի՞նչ ղիպւում է պահել.—

«հանապազատուտ արանց Աղուանից» (գ. գիրք,
Գ. եր. 280):

Իսկ «Ուստայ Գէորգ Բարխուդարեանցի»
հրատարակած զարաբաղցիների բարբառով
«Ջարոյական» առածների մէջ կարդում ենք
մի առած՝ որ միայն զարաբաղցիներն ունին,
որով, ըստ զերապատիւ հրատարակչի ասու-
թեան, խրատում—դաստիարակում են իրենց
փոքրերին. որ է.

«Իրեսան հիլի (դրսից—արտաքուստ հայելի),
տըկըհան ծիլի (յետեից—ներքուստ ածելի)»
(եր. 20):

ԼԳ.

«Սիւն առ ծովուն կանգնէ (Շապուհ), և առեւծ ի վերայ՝ մատեան ընդ ոտիւք ունելով, որ նշանակէ այսպիսի ինչ. քանզի առեւծ հօր է ի գազանս, այնպէս եւ պարսկականն ի քաղաւորս. եւ մասեան ժողովիչ է իմաստութեան, որպէս հռովմայեցոց տէրութիւնն» (գ. գիրք, ԺԸ. եր. 302):

Թէ առիւծ և մատեան նշանակաւն են Պարսից Թաղաւորի հզօրութեան և հռովմայեցոց իմաստութեան ժողովիչ լինելուն՝ տարակոյս չունիմ, սակայն յօրինացող այդ բացատրութեան մէջ պակասում է Շապուհ ըուն առաջնորդող միտքը:—Շապուհ եթէ այդքանը միայն կամենար հասկացնել՝ մատեանը առիւծի առաջ, կողքին կամ յետ կը գետեղէր, և ոչ անպատճառ ոտքի տակ:

Շապուհ պարսկական մեծամտութեամբ իսկապէս ցանկացել է հասկացնել թէ՛ իմաստութիւնը ոյժի խոնարհ ծառան է...

Ժիշդ մեր ժամանակի վարդապետութիւնը:

ԼԵ.

«Նահատակեցաւ, նախ ի Պիսաս զբռնամարտիկսն յաղթելով, դարձեալ յԱրեգ քաղաքի ելլալացոց յօրհասարակի կոտորեաց առեւծս, յորում

փառս Ողիմպիայ խաղուն հանդիսի յըմբշամարտկացն երեւի և յարգի» (գ. գիրք, Խ. եր. 343):

«զըռնամարտիկսն» նշանակում է ոչ թէ «ձեռքով կռուողներին», այլ՝ ըուն—ընցի—ըռնցքով կռուողներին (մուշտակուի): Եւ հատուածը ես Թարգմանում եմ.—«քաջազործութիւններ արեց, նախ Պիսաս քաղաքում յաղթելով ընցի կռուողներին, երկկորդ՝ ելլադացոց Արեգ քաղաքում միջօրէին կոտորեց առիւծների, ուր Ողիմպիական խաղի հանդիսի փառքերով յայտնուում և յարգուում է ըմբշամարտիկներէց»¹:

ԼԸ.

«Գնաց և Խոսրով ի բանակէն իւրմէ առ ծովուն Գեղամայ, զոր Մուսն կոչեն², ընդ առաջ Արշակայ, զի մի ի սահմանն իւր իջցէ. և ոչ այնչափ ատակեաց աճապարել՝ մինչեւ եգիտ զԱրշակ իջեալ յիւր սահմանն, ի գաւառին Վանանդայ: Եւ

1. Վերջին նախադասութիւնը մի քանի կերպ կարելի է Թարգմանել. ես այս ընտրեցի.

2. Ս. Էջմիածնի մատենադարանի № 1669 ձեռագիրն ունի «Գնաց... առ եզր ծովուն Գեղամայ, զոր մօրսն կոչեն»։ Եւ № 1665-ը ունի «զոր մաշքսն կոչեն»։ Վերջինն է հին եւ ուղիղ ընթերցուածը, որը սխալմամբ կարդացել են «մօրսն»։

պատահեն միմեանց ի դաշտին որ կոչի Երեւել» (Գ. գիրք, ԽԶ. եր. 354):

Այս հատուածի մէջ «ի գաւառին Վանանդայ», ապա և «ի դաշտին որ կոչի Երեւել» բառերը կարծում եմ յետոյ յաւելացրուած. որովհետեւ պատահել են միմեանց և պատերազմել ոչ թէ Վանանդում, այլ Գեղամայ ծովի մօտ, ինչպէս պատմում է Նո 1669 ձեռագիրն այլ և Թովմայ Արծրունին, ի հարկէ ժամանակին իւր ձեռքում ունեցած Խորենացու պատմութիւնից առնելով.

«եղեալ պատերազմ մեծ Արշակայ և Խորովու յեգերս ծովուն Գեղամայ՝ ի մօրին տեղոջ» (ա. դպր. ԺԱ. եր. 69):

Կամ՝ Թերեւս Խորենացու նախօրինակում «Վանանդայ» բառի տեղ Վարաժնունիք եղած լինէր, կամ՝ մի ժամանակ Գեղամայ արեւմտեան ծովեզերքը Վանանդ են հասկացել: «ի մօրին տեղոջ» նշանակում է տղմոտ—ճմճմայ տեղում. այդպիսի տեղեր են յիշեալ ծովակի արեւմտեան կողմերը, թէ՛ դէպ արեւմտեան հիւսիս—ձիբուխլու գիւղի առաջի դաշտը, և թէ՛ արեւմտեան հարաւ—Ելենովկայ և Օրդակլու գիւղերի սահմանները: Այս գիւղի հարաւին կողքի բլրին, ինչպէս լսեցի (այդ գիւղում և Սեւանում

երկար տարիներ ապրող մէկից), և՛ այժմ անուանում են «Մուրսի սար» (լեռ):

Նախ քան ձեռագրի (Նո 1669) և Թովմայի այդ վկայութեան իմ պատահելը՝ ես հէնց Խորենացու հատուածի պղտորութեան վերայ կանգ էի առել և «որ կոչի Երեւել»-ը համարում էի յետին ժամանակի քարեպաշտական յաւելուած, որովհետեւ իսկոյն յիշեցի գեր. Մեսրոպ արքեպիսկոպոսի «Գեղարքունի ծովազարդ գաւառ» գրքի մէջ կարգացածս: Այդ տեղ (եր. 381—386) մէջ է բերուած Սեւանի մի ձեռագիր Յայսմաւուրբից «Վարք և պատմութիւն Գօշին Մխիթարայ», որից իմանում ենք թէ Գօշ Մխիթարին (ԺԲ. դար) Շապոտիկ (Ձիբուխլու) գիւղի առաջի ծովեզերեայ դաշտի վերայ Զրիստոս և Աստուածածին Մարիամ վրանի մէջ և ոսկէ աթոռների վերայ բազմած երեւել են . . .

Ինչպէս և այժմ ստուգեցի՝ այդ տեսիլքի աւանդութիւնը ունին բոլոր շրջակայ գիւղերը և Սեւանի միաբանութիւնը: Այդ տեսիլքի տեղում հնուց շինուած կայ մի մատուռ, ուր տարին մի անգամ ուխտագնացութիւն է լինում, մատաղներ են անում և պատարագ: Մատուռը կոչւում է Աստուածընկալ:

Այժմ խնդիրն ի հարկէ այս աւանդութեան ստոյգ կամ անստոյգ լինելը չէ, այլ այն՝ որ այս աւանդութեան ստեղծուելուց, ուրեմն եւ ԳՕ2 Մխիթարից յետոյ այդ դաշտը կոչուել է «Երեւել» եւ իբրեւ յայտարար (տեսիլքի)՝ մոծուել է Խորենացու հատուածի մէջ, որից և անցել է Բուզանդի մէջ կամ ընդհակառակն¹:

Այսպիսի քարեպաշտական յաւելուածներէց մին էր «եւ աստ ուրեմն յայտնել նշխարաց երկոցունց եւ փոխել յառապարն», որի մասին խօսել եմ արդէն (հատուած ԴԳ.):

Ոչինչ անհաւատալի չի լինի՝ եթէ ասեմ՝ որ Սեղբեսարոսի վարքագրութեան հայերէն թարգմանութիւնից (678 թ.) յետոյ նոյնպիսի քարեպաշտներ պատուաստել են ս. Մեսրոպին «գոյր տեսլեամք հրեշտակական, մտօք ծննդական, քանիւք պայծառ» և ինչ յայտնի հատուածը՝ որ այնքան գայթակղութեան պատճառ դարձաւ . . .

1. «Հասեալ էին ի դաւառն վանանդայ, ի տեղւոջն՝ որ անուանեալ կոչէր յերեւել» (Բուզ. գ. դպր. ԻԲ. եր. 117):

ԼԹ.

Մեսրոպէան և Զաքարիայ
Բեան Կառէր և Դպրոցէն:

Խորենացու պատմութիւնից (այլ և Կորիւնի և Զ. Փարպեցու) իմանում ենք՝ որ Դանիէլեան կոչուած զրերը թերի էին, «ոչ... բաւական . . . հոլովել» մեր լեզուի բոլոր հընչիւնները. որպիսի պատճառաւ ս. Մեսրոպէս իւր մի քանի աշակերտների հետ անձամբ գնաց նախ Միջագետք՝ առ Դանիէլ. աւելին չգտնելով՝ անցնում է Երեսիա՝ Պղատոն անունով մի ճարտարասանի մօտ, ապա Սամոս՝ Հռոփանոսի մօտ: Երբ ամենքից ևս «անշահ» է մնում, ինչ տարակոյս որ անշահ կը տրտմէր, կը մտատանջուէր հայրենասէր Հոգին: Ահա այդ վիճակում հաւատով

«յաղօթս ապաւինի. և տեսանէ ոչ ի քուն երազ և ոչ յարթնութեան տեսիլ, այլ ի սրտին գործարանի երեւութացեալ հոգւոյն աչաց թաթ ձեռին աջոյ՝ գրելով ի վերայ վիմիւ-ա, ե, է, ը, ի, ո, ւ. զի որպէս ի ձեան վերջը գծին կուտեալ ունէր քարն: Եւ ոչ միայն երեւութացաւ, այլ և հանգամանք ամենայնին որպէս յաման ինչ ի միտս նորա հաւաքեցաւ: Եւ յարուցեալ յաղօթիցն, ետեղծ գնչանադիրս մեր» (Գ. զիրք, ՄԳ. եր. 369—371):

Մի և նոյն բառերով (բայի ձայնաւոր տառերը) պատմում է և Ղ. Փարպեցին (եր. 28—29):

Խորենացու պատմութեան այն ձեռագիրները, որոնք ունին այդ ձայնաւորները՝ ինձ թւում է որ կողմնակի կերպով կամենում են ցոյց տալ թէ ս. Մեսրոպը Դանիէլեան տառերի թերին միայն լրացրեց (Ասողիկ և Վարդան վ. Բարձրբերդցի պատմիչները պարզապէս վկայում են այդ), իսկ հակառակ տեսակի ձեռագիրները՝ «եստեղծ զնշանագիրս մեր» — քոլորը, Նրկու կարծիքն էլ իրենց պաշտպան և կուսակիցներն ունին: Խորենացու պատմութեան աշխարհաբան թարգմանող Սրբազանի և «Միաբան» Գ. Տ. Մկրտչեանի ցանկութիւնը թէ՛ «ժամանակ է բնագրից դուրս ձգելու այս գրերը», եթէ ոչ յոռի՝ գոնէ դեռ շատ վաղ է...

Թէ այսպէս թէ այնպէս, իսկական գայթակղութեան նիւթը ս. Մեսրոպի գրերի գիւտի պատմութիւնն է. առհասարակ մտացածին են համարում գիւտի երեւոյթը: Ինչ որ մեզ անբնական է թւում — չի բացատրւում՝ սովոր ենք առհասարակ հրաշք անուանել, իսկ հրաշքի հաւատացող հազիւ թէ կան այժմ. մինչ՝ ոչ միայն Խորենացին, այլ և

Թէոդոս Կայսրը իւր պատասխանի գրութեան մէջ հաւատում և գրում է. «կատարումն արուեստիդ ի շնորհաց վերնոյն եղել»:— Եւ Կ. Պօլսի գոռոզ Ատտիկոս եպիսկոպոսը՝ «մինչև Ամենակալին տեսեալ զսնտի աշխատութիւնն, բղխեաց ի ձեզ զշնորհս Հոգւոյն, ընդ որ այժմ ուրախ եմք» (Գ. գիրք, Ծէ. եր. 381 և 383):

Այսու հանգերձ, ես անզոր եմ ընդհանուր թերահաւատութիւնը փարատել կամ այլ կերպ բացատրել գրերի գիւտի երեւոյթը, սակայն կը յիշեցնեմ ս. գրքից մի այլ օրինակ ևս, այն՝ որ Բաբելացոց Բաղդասար թագաւորի դէմ յանգիման դահլճի որմի սպիտակ ծեփի վերայ գրեց երեւութացող թաթը — «մանէ, թէկէզ, փարէս»: Ընդ սմին յարելով կը յաւելացնեմ Փլամմարիօնի կարծիքը՝ նմանօրինակ չբացատրուող բաների մասին. —

«Il y a bien des choses que nous sommes forcés d'admettre sans pouvoir en aucune façon les expliquer. Nier ce qu'on ne peut expliquer serait de la pure démente» (Uranie. livre III. 224).

Դուռնիի այդ գլուխը (télépathie) կարգացողը կը տեսնի մէկ մէկից աւելի և աւելի անհաւատալի՝ բայց և ստուգուած — իրօք կատարուած շատ բաներ. օրինակ — նաւաւ-

պետի քարտախտակի վերայ անձանօթ զրօղը
և գրածը—«Gouvernez au nord-ouest». Լէն:

Այժմ ինքնին առաջ է գալիս աւելի
ծանրակշիռ մի երրորդ հարց: Կորիւնի, Խո-
րենացու և Փարպեցու զրաճներէց յայտնի
է՝ որ Դանիէլեան կոչուած տառերը նոր
չստեղծեց Դանիէլը, այլ «վաղնջուց» կային¹.
սակայն այդ ինչ անտէրուտիրական տառեր
էին, ում էին պատկանում, ինչ է նշանա-
կում «յայլոց դպրութեանց թաղեալք եւ
յարուցեալք ղիպեցան», այդ ինչ զպրու-
թիւններ պիտի եղած լինէին...

Աբգար Հայոց թագաւորը քրիստոնէու-
թիւն ընդունեց ս. Թագէոս առաքելոյ քա-
րոզութեամբ՝ 33 թուին.

«Եւ հաւատացին ամենեքեան. և մկրտեցաւ.

1. «Ապա առեալ երանելի հոգաբարձուացն (ս.
Սահակ եւ Մեսրոպը) զյակարժացիւսն... եւ իբրեւ ամն
երկու... նովին նշանագրովք տանէր: Մանաւանդ զի
եւ նշանագիրքն իսկ յայլոց դպրութեանց քաղեալք եւ յա-
րուցեալք դիպեցան» (Կորիւն. եր. 9): «Կարգեալ ըստ
ձեռոյ օրինակի յունականին զվաղնջոց գտեալ նշանագիր
տառից» (Խոր. Գ. գիրք. ԾԲ. եր. 369): «մանաւանդ թէ
գոն նշանագիրք հայերէն չեղոչոյս... ասացեալ է ուրումն
(Հաբէլ) ցարքայ (Վռամշապուհ) թէ տեսի նշանագիրս հա-
յերէն առ ումեմն եպիսկոպոսի... Դանիէլի եպիսկոպոսի,
առ որում նշանագիրքն հայերէն կային... կարգել զվաղն-
ջոցն գտեալ շարացիրս տառիցն. զորս ոչ ուրուք էր հոգա-
ցեալ արկանել ի կիր» (Ղ. Փարպ. եր. 26—27, 30):

ինքն Աբգար և ամենայն քաղաքն. եւ զդուստ-
նարաց կոոցն փակեցին. և որ ի վերայ բազմին
և սեանն կային պատկերքն՝ ծածկեալ պատեցին
եղեգամբ. և ոչ զոք ածէր բռնութեամբ ի հաւատս,
բայց օր ըստ օրէ յաւելեալ ի հաւատացեալսն բազ-
մանային» (Բ. գիրք, ԼԳ. եր. 158):

Աբգարի որդին և յաջորդը Անանուհ,

«իբրեւ թագաւորեաց... երաց զսանաւս կոոցն
եւ կալաւ զպատեցն ներանոսութեանն» (Բ. գիրք,
ԼԳ. եր. 165): Այսպէս և աւելի եռանդով
հալածեց Սանատրուկը քրիստոնէաներին, իսկ
Ա. Խոսրովը գրեթէ ջնջեց նոցա. «բազում
վկայեալս և ի Խոսրովու ի մերում աշխարհիս»
(ՀՅ. եր. 231): Դորանից յետոյ յայտնուում է
մեր ս. Գրիգոր Լուսաւորիչը (301 թ), հա-
ւատում և Մկրտում է Տրդատը, նախա-
րարները և ժողովուրդը. զեռ թարմ էին
մերձաւոր անցեալի անցքերը, փորձով հաս-
կացել գիտէին որ կոոց տաճարների ղոնները
փակելով և բազմիւնների և սիւնների վերայի
պատկերները եղեգներով ծածկելով չէր կա-
րելի ապահովել քրիստոնէութիւնը. մտածե-
ցին արմատից խլել հեթանոսութիւնը, այս
անգամ կործանեցին կռօքերը, տաճարները,
պատկերները, միանգամայն ինչ որ հեթա-
նոսութեան հետ կապ ունէին՝ ջնջեցին
ևռանդով.

«խիկ նուանել հաւանեցուցանողականաւ կամ բռնաւորականաւ բանիւ՝ առաւել էր թագաւորին շնորհ. քանզի բոտ հաւատոցն ոչինչ կասեցուցանեալ գործն» (բ. գիրք, Ղ.Բ. Եր. 270—271):

Մեր նախնիք, որ դպրութեան չաստուծոյ անուումով տաճար եւս ունէին, հեթանոսութեան ժամանակից ունեցել են սեպհական կամ սեպհականեցրած գիր այլ և գրպութիւն (հարուստ թէ՛ աղքատ), բայց Տրդատի և նման ժամանակներում «թուղեալք», իսկ Վռամշապուհի՝ «յարուցեալք»: Նախամեսրոպեան գրերի և մանաւանդ գրպութեան մասին աւելի քան մեր պատմիչների կցատուր անգնկութիւնները՝ ինձ համար համոզիչ, կենդանի խօսուած վկայ է մեր այն ժամանակի մշակուած զարգացած դասական լեզուն՝ որով հէնց Դանիէլեան «յանկարծագիւտ» գրերով անմիջապէս ձեռնարկեցին Սահակ և Մեսրոպ Թերունիները թարգմանել ու գիրքը նախ ասորերէնից:

Եթէ հեթանոս Հայերը չէին ունեցած հայկական դպրութիւն, հապա որտեղից յանկարծ սունկի պէս բուսաւ այն ունի լեզուն...

Աւելի քան միամիտ պիտի լինել հակառակն քարոզելու համար («Միաբան», Արար. 1896 թ. Եր. 30—32):

Խ.

«աղանդոյդ բորբոքիսնաց» (գ. գիրք, ԾԵ. Եր. 383):—«քննել դժանդագործ բորբոքիսնաց» (Եր. 384):—«ի դաւառն Գողթան . . . ի նմա զօղեալ աղանդն հեթանոսական...: Եւ ոչինչ յայնցանէ պակաս արարեալ գտանի և Սիւնեաց աշխարհին» (ԽԵ. Եր. 356):

Հաւանական է թէ այս վերջիններն ևս բորբոքիտոնների նոյն աղանդն էր. սակայն ինչ էր այդ աղանդը:

Շամիրամի մասին նոյն Խորենացին գրում է. «վաւաչն այն և բորբոքիսն Շամիրամ ի բազում ամաց լուեալ զգեցեցկութիւն նորա» (ա. գիրք, ԺԵ. Եր. 51):

Սորանից կարելի է հետեւացնել թէ ինչ պիտի լինէր բորբոքիտոնների աղանդը:

ԽԱ.

«քանզի անգէտք էին մեռում արուեստի, ի բազում մասանց թերացեալ գործն գտանէր. վասն որոյ առեալ մեծին Սահակայ և Մեսրոպայ զմեզ առաքեցին յԱղեքսանգրիայ՝ ի լեզու պանծալի, ի սոոյդ յօղանալ ձեմարանին վերաբանութեան» (գ. գիրք, ԿԱ. Եր. 391):

Ձեռագիրներից ոմանք ունին «վերքաւնութեան» ընթերցուածը:

Խորենացին իւր արուեստի մասին ուրիշ անգամ ևս գրում է. «Իմով ամենիմաստ արուեստիս և կատարելագոյն յարմարութեամբս» (գ. գիրք: ԿԸ. եր. 412):

Ինչ թուում է թէ նորա արուեստը իմաստասիրութիւն, փիլիսոփայութիւն պիտի լինէր, քանի որ նա ԿԲ. գլխում գրում է. «ուսանել զգօրութիւնս պէսպէս իմաստից ի նոր Պղատոնէն յիմն ասեմ վարդապետէ»: — Խորենացու վարժապետը նոր Պղատոն է համարւում, իսկ հին Պղատոնը փիլիսոփայ էր... Յաւելացնենք՝ որ Զ. Փարպեցին և ապա Ստեփաննոս Ասողիկը Մովսէս Խորենացուն «փիլիսոփոս» անուն են տուել: Եթէ այսպէս, «վերաքանութեան» բառը իւր իսկական տեղումն է և նշանակում է ընազանցական ուսումն, փիլիսոփայութիւն:

Այն սրբագրութիւնը, որ Նորայր Ն. Բիւզանդացին և Բ. Պատկանեան առաջարկում են կարդալ «վերաբանութեան» բառը յաջորդ գլխի վերնագրի սկզբում, անընդունելի է, որովհետեւ ա) վերաքանութիւն Աղեքսանդրիայի դպրոցի բարձր ուսումն — արուեստը պիտի լինէր, (զ) որ Խորենացին յուղարկուեց սովորելու: Բ) «վերաբանութեան» բառը եթէ պատկանէր յաջորդ գլխի վեր-

նագրին, հարկ էր որ գրուած լինէր վերաքանութիւն, — ուղղ. հօլով, մինչ՝ տպագիր և ձեռագիր Խորենացիներն ունին «վերաքանութեան» ընթերցուածը: գ) Զի կարող «վերաքանութիւն» նշանակել, քանի որ յաջորդ (ԿԲ.) գլուխը Խորենացին ամբողջովին ընծայել է իւր ճանապարհորդութեան միայն եւ եթէ, առաւելապէս Նգիպտոսի նկարագրութեան, ուր վերաքանութեան հոտ չկայ: դ) Այդ (ԿԲ.) յաջորդ գլխից յետոյ դեռ գալիս են այլ եւս հինգ գլուխներ չարաբաստիկ պատմութիւնների, և ապա յայտնի ողբը...

ԽԲ.

«մարդ գրեց վարկանելով՝ կարեկցութեամբ մեզ հաւասարեալ» (գ. գիրք, ԿԵ. եր. 403):

«Կարեկցութեամբ» բառը պէտք էր հասկանալ և թարգմանել համակարիք. — «համարելով քեզ մարդ՝ համակարիք մեզ»...

ԽԳ.

Ահա և աւելորդ է:

«գով արտասուեցից: Զհէքն իմ մանուկ և թաղաւոր, զխորհրդակցութեամբ վասբար՝ ազգաւ

ի բայ Ընկեցիկն, . . . եթէ . . . (Գ. ՂԵՔԶ, ԿԸ. ԿՐ. 413):

«Վատթար» բառի վերայի բուժ կէտը և՛ սխալ է և՛ աւելորդ, որովհետեւ «խորհրդակցութեամբ» յատկացեալ է, իսկ «ազգաւ» — նորա յատկացուցիչը: Հատուածը պէտք է թարգմանել. «Որին ողբամ: Ազգի վատթար խորհրդակցութիւնով գահակցեց եղած (մերժուած) իմ խեղճ մանուկ թագաւորին, . . . թէ» . . . :

ԽԴ.

Այս վերջին հատուածում գնում եմ իմ թարգմանութեամբ մի քանիսը այն բառերից՝ որոնք դժուար կամ սխալ են հասկացուում, և մի — երկու սրբագրութիւն:

«ովիտս» (Ա. Ժ. Զ.) — հովիտներ, ոչ թէ «որթեր» . . .

«ի քաղաքն ամարաստանի» (Ա. Ժ. Է.) նշանակում է — դէպ ամարասնոցի քաղաքը:

«և զկնի մահուան նորա» (Շամիրամայ) (Ա. Ժ. Ը.), պէտք է լինի «և զկնի մահն նորա»:

«շերտաւորքն» (Ա. Ի. Դ.) — փայտով — մահահակով (գազանակ) զինուորները:

«զվրիպեալն և զսուտն» (ի Պարսից առասպ.) — վրիպածին, սուտին, այսինքն սատանային:

«Եւ այս» (ի Պարսից առասպ.) — լաւ կըլինի որ գրաբառում գրեն «Եւ այսն»:

«Միանգակն անգառնալի» (Ս. Ը.) — սրբած — մերկացրած սրից երես չըարձնող Միանգակին. կամ՝ անտեղիտալի Միանգակին:

«արեամբ զեռնոց մխեալ» (Ս. Թ.) — մխել ինչպէս երկաթը մխում են, ոչ թէ «թաթախել»:

«յերկանաքար արձանին» (Ս. Թ.) — երկանաքարեայ (որձաքար) արձանի մէջ:

«նշաւակ ի նետաձգութիւն կորովութեան» (Ս. Ժ. Ա.) — քաջաւարժ նետաձգութեան մէջ յայտնի — անուանի:

«վարար» (Ս. Լ. Է.) — Այրարատեան բարբառով նշանակում է յորդ. օրինակ. վարար անձրեւ, — առու, — գետ:

«հանգոյց ի հանգուցէ» (Ս. Խ. Զ.) — իջեւան, կայարան. թէպէտ ճիշդ չեն ընդգրկում հանգոյց բառի միտքը:

«մնացեալ գնացիւք ոտից» (ը. ծԱ.) —
երեխով, յղի:


«վտարանդեալ» (զ. ԺԹ.) Սարգիս արք-
եպիսկոպոսի ձեռագիրն ունի «վտարանջեալ»
որ է ուղիղը:

«նիազ» (զ. ԽԲ.) — կարօտութիւն:

«համազն» (զ. ԿԵ.) — համագգի:

«կայկայեցաւ» (զ. ԿԸ.) — կայ — կայան —
տեղ ըննեց, հաստատուեց:

«համբարոյք աւազակաց» (զ. ԿԸ.) — համ-
բարոյք, միտերող — պարտկողք աւազակաց
գողօնքների կամ՝ պէտք է գրուի «համաբա-
րոյք (համբարոյ) աւազակաց»:





ՀՀ Ազգային գրադարան



NL0255013

